ՅՈՎՀԱՆՆԷՍ ԼԵՊԼԵՊԻՃԵԱՆ
(Ա. Ր Ծ Ի Ի)

ՊՍԱԿԻ ՏԱԿԻՑ

ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

Վ Է Պ

Տաճկահայերի կեանքից

ИЗЪ ПОДЪ ВѢНЦА

КЛАДБИЩЕ

повѣсть

Іоаннеса Леблебиджяна
(АРЦИБЪ)

ԲԱԳՈՒ
Եղբարք. տպարան «ԱՐԱՄԱԶԴ»

БАКУ
Электро-Тип. «АРАМАЗДЪ»

1 9 1 5

891.99 | 6028
Լ-39 | Լեպչեսիրեան, Հ.
Դասկր սասկրկ գրքրկ
մասկրկ
28/VII 30.VII 219

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԼԵՓԼԵՓԻՃԵԱՆ
(Ա Ր Ծ Ի Ի)

89.99
Ա-39

ՍՏԱՑՎԱԾ Է 1967 Թ.

II
28086

ՊՍԱԿԻ ՏԱԿԻՑ

ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

Վ Է Պ

Տաճկահայերի կեանքից

ИЗЪ ПОДЪ ВѢНЦА

КЛАДБИЩЕ

повѣсть

Іоаннеса Леблебиджяна

(АРЦИВЪ)

БАКУ
Электро-Типографія „Арамаздъ"
1915

Дозволено цензурою 1915 г.

Նուէր դիւցազն Հայդուկներին

Իմ անդրանիկ աշխատանքս Ձեզ եմ նուիրում, Ձեզ՝ պարծանքի եւ ապագայ փառքի մարտիկներիդ:

Դո՛ւք, իսկական անձնուէր հերոսնե՛ր, անարգելով կեանքի զանազան հանոյքները, անեղ մարտակոչի առաջին իսկ հրաւէրին արձագանք տուիք, Ձեր անմահ նախնիքներից ժառանգած ռազմիկ դիւցազնութեան վսեմ ոգով կազմ, զինուած, պատրաստուած՝ ցուրտ, սառնամանիք օրերին նեստեցիք բարձրաբերձ սարերի կատարներ՝ մեր դարաւոր թշնամուց արիւնոտ հայրենիքը փրկելու:

Անմահնե Քաջն Վարդաններու, դիւցազն Ցովնաններու արիւնահոս կուրծքերի հերոսութեանց փառքը երգող վիրաւոր պլպիւլին, այսօր Հայաստանի լեռները բընդացնող Ձեր պաշտելի զենքերի զոռուն զոչիւնը, աւետիս է տալիս, որ հնչում է ժամը փրկութեան:

Դո՛ւք, անկաշառ իսկական ազնիւ հերոսնե՛ր, որ հայուն ինքնատուր վսեմ անձնուիրութեամբ, զոհում էք Ձեր կեանքը՝ բռնակալութեան շղթաները փշրելով ազատութիւն աւետելու թուրքի լուծի տակ հեծող հայութեան՝ Ձեր փառքը անմահ է եւ անմահ պիտի յիշուի դարէդար:

Ձեր անձնուրաց գործունեութեան խնկարկու օրինակը, թո՛ղ ապագայ սերնդին կրթիչ գրականը մնայ:

Թեպետեւ իմ այս անդրանիկ աշխատութեանս մէջ զուցէ պակասի գեղարուեստը, գրական հմտութիւնը, բայց

զգացմունքը՝ երբ՛է. իմ բոյլ, տկար գրչովս աշխատած եմ պանդխտութեան դաժան կեանքի խկութիւնը պարզել . . եւ բո՛ղ նեռուի ինձ՝ եթէ երբէք ազատութեան միակ նանապարհը Ձեզ նման անձնուէր քաջերի աւաջնորդութեամբ եւ ժողովրդի ուժեղ մասնակցութեամբ հայրենիքը հիմքից բարեկորոգելու մէջ եմ գտած:

Նուիրելով անդրանիկ աշխատութիւնս Ձեր ոսկեդար յիշատակը յաւերժացնելու, մնամ միշտ

Ձեր անկաշառ իտեալի
խոնարհ ծառայ

ՀԵՂԻՆԱԿ:

ԽԱՐԿՈՎ, 1915 Թ.

ՍԻՐԱՀԱՐՆԵՐԸ

Ա

1900 թուականին էր։ Սև, մութ մառախլապատ գիշեր մ'էր։ Գիշեր մը՝ որ իրաւ սարսռեցուցիչ, զարհուրելի ազդեցութեամբը, կարծես, գուշակել էր տալիս մի ինչ որ վաղ . . . տանտանջալից խորհուրդ։

Թ. գիւղի լերան լանջում, աղբիւրի պլպլակի քիչ վերևում, հակայ, դարաւոր կաղնիի մը կշտին, գիւղական գեղջկուհի Աննիկը, կէս թաղնուած, անհամբեր հայեացքով սպասում էր իրա սիրելի Աշոտին։ Չէր գիտեր պատճառը, թէ ինչու համար խնդրուած էր այս երեկոյ անպատճառ իրան սպասել . . . ուխտավայր կաղնիին մօտ, այն տեսակ պաղատագին դէմքով ու նայուածքը սովորականից այնքան տարբեր, որ հոգեպէս տանջւում էր. չըլլայ թէ հայրը արգելք հանդիսացած ըլլայ մեր սիրոյն։ Սակայն չէ՞ որ Աշոտը ինքն էր ,որ ըսաւ, թէ հայրս յօժարաւ, մայրս նոյնպէս, այլևս ո՞վ կարող է մեր սիրոյն արգելք հանդիսանալ . . ո՞վ կարող է մեզ իրար-

մէ բաժնել . . ով։ Սոյնանման մտածմունքներէ մէջ էր խորասուզուած, երբ աջ կողմից տերևներու փոքր շշուկ մը լսուեց՝ ուրկէ մի ինչ որ սև նշան դէպի իր կողմն էր գալիս։ Ոհ, գալիս է իմ արևը . . իմ անգինը։

—Շատոնց է սպասում ես, հոգիս, արդէն մոտեցած, հարցուց Աշոտը։

—Ինչպէ՞ս չ՚սպասէի, իմ արե՛ւ, իմ կեանք, երբ դեռ քո պաղատալից ձայնի արձագանքը, դեռ այսօրուայ թախծոտ և մելամաղձ հայեացքիդ վերքը սրտումս է, օդը մինչև իսկ չեմ տեսնում որքան մռայլ է ու խաւար, կարծես, սրտի զգացումներուս ուզում է համապատասխանել խեղդուկ . . . տանջալից։

Աշոտը առաջին անգամից ոչինչ չ՚կարողացաւ պատասխանել։ Աչերը յառած սիրականի տխրամած դէմքին՝ դիտում էր. չէր ուզում խորհրդաւոր, խաղաղ լռութիւնը վրդովել, ուր՝ լսւում էր աղբիւրի կկլոցի ձայնը միապաղաղ՝ իրա հոգետանջ զգացումներու արցունքի փոխան։

—Հոգիս, սիրում եմ քեզ անկեղծ, երիտասարդական մաքուր սիրով և քո սիրոյ բոցը իմ մէջս անմար է ու պիտի վառի, բոնկի մինչև որ, . . . ալեկոծ ձայնով մը կրկնեց վերջապէս, մինչև որ . . . . ։

— Մինչև որ ինչ... յանկարծակիի եկած, այլայլուած ձայնով մը, հարցուց Աննիկը։

—Այո՛, մինչև որ, քո սիրոյ պտուղը վայելելու արժանանամ, հաստատ ձայնով մը շեշտեց Աշոտը։

—Չէ՞ որ պիտի նշանուինք, վերջը պսակ, հարսանիք, հազիւ լսելի ձայնով ըսաւ Աննիկը։

—Այո՛, բայց . . .

—Ի՞նչ։

Տիրեց դարձեալ լռութիւն և պատասխանը եղաւ հոգեկան պրկատանջ զգացումներու ամփոփման կայլակը՝ Աշոտի թախծոտ աչերում։

—Բայց . . դաժան կեանքի հարուածը մեզ ալ ստիպում է մօտ ժամանակի համար, հեռանալ հայրենիքից . . պապենական կտուրից և քեզնից։ Պանդխտութեան ցուպը ձեռք առած գնալ . . գնալ . . . մօտիցդ հեռանալ. քեզ փնտռել . . . հազիւ լսելի, դողդոջ ձայնով մը շարունակեց Աշոտը։

Քարացած, ոչ մի խօսք չ՚հասկացողի մը նման ապշացած՝ նայում էր Աննիկը. «գնալ. գընալ . . մօտիցդ հեռանալ, քեզ փնտռել» կրկնում էր ինքնամոռաց, կէս խելագար։ Զուզեմ մի գընար, եկ մօտս . . . արի, կ՚ուզեմ քեզ հետ ապրիլ, միասին լալ, երգել . . . տանջանքի ճիրաններից փրկուողի մը նման բղաւեց և պինդ մը Աշոտի գլուխը հեշտակուռ կրծքին սեղմած, առաջին համբոյրն էր որ յանդգնում էր, իր սիրած սիրահարին ճակտին դրոշմել և այդպէս

գլուխը կրծքում սեղմած՝ մի քանի վայրկեան քարէ արձաններու նման լռած էին . . դիրկընդխառն, մտախոհ։

Ո՞վ գիտէ դեռ որչափ ժամանակ կ'մնային այդ դրութեան մէջ, եթէ Աննիկի սրտամաշ կսկիծի կայլակը մարգարիտներու նման շարան, շարան չ'իջնային Աշոտի դէմքին, որ լսում էր Աննիկի հոգւոյ մթութեան խորերի պաղատանքը. «մի գընար, չ'ուզեմ, եկ մօտս»։

Մի տարիից անպատճառ կ'վերադառնամ. մտածում էր Աշոտը պատկերացնելով իր ապագայ կեանքը իրա բոլոր երջանկութեամբ։ Հարուստ կվերադառնամ կամուսնանամ, զաւակներ կունենամ, շատերը կնախանձին վրաս . . ծնողքս կերջանկացնեմ այլևս բաժանում չըլլար . . կապրիմ դոհ, ուրախ և դեռ ինչեր ինչեր. այս երազած կեանքի նախանձելի երջանկութենէն արբշիռ՝ կէս պաղատագին և կէս պահանջկոտ ձայնով մը ըսաւ.—Այո՛, Աննիկ, մի տարիից անպատճառ կվերադառնամ, ոչ լայնածաւալ ովկիանոսները, ոչ վիթխարի լեռները կարող են արգելք հանդիսանալ վերադարձիս։ Եւ թող սա հինաւուրց կաղնիի նայուածքը, թող աղբիւրի կըլկլոցի միապաղաղ մեղեդին, թող բնութեան ամայութիւնը և դիշերուայ խորհրդաւոր լռութիւնը վկայ ըլլան իմ խոստմանս։ Միայն աղերսում եմ պաղատում՝ քո կամքը, համաձայնութիւնը առ-

նել, որպէս զի ուժ առնեմ, կամք, կորով և խանդ։

—Բոլոր պանդխտութեան, օտարութեան գընացողները այդ ոսկի խոստումներով են մեկնում . . գնալիս . . . գնում և մոռանում են . . եթէ դու ալ մոռնաս, ոհ, Աստուած իմ, գետինը թող պատռի ինձ, կուլ տայ, անյայտանամ աշխարհի երեսից, քան թէ իմանամ, թէ դու ինձ մոռցեր ես, մոռցեր . . հեծկլտալով ընդմիջեց՝ Աննիկը։

—Կարող եմ միթէ առանց քեզ ապրիլ, հոգիս, երբ ամբողջ աշխարհը կթուի ինձ բանտ և բոլորը, մութ կեանք։ Եթէ երբէք, ես պանդխտութեան դաժան, դառնակսկիծ կեանքի հետ հաշտուում եմ. լոկ, քո նուիրական «սէրդ», իմ պաշտած իտէալն է, որուն տիրապետելու համար յանձն եմ առնում յակամայից, համոզելով նրան ճառում էր Աշոտը։

—Արդէն ո՞ր մեկնողը, ո՞ր հեռացողը այդ համոզեցուցիչ, ինքնավստահ խօսքերը չէ՞ ասեր իր բաժանման րոպէին։ Շողակաթենց աղջկան՝ Տիրուհիի սիրական Վարդօն էլ նոյն խօսքերով և խոստումներով էր մեկնած, ուր է, ինչու համար մինչև հիմայ չվերադարձաւ, ինչու համար վերջերս նամակ մինչև իսկ չէ գրում։ Զարլեզունները խօսում են, որ հոն՝ օտար երկրում՝ անծանօթ աղջկան մը վրայ սիրահարուեր է,

այն ասպիճան, որ մոռցեր է թէ՝ ուն, թէ՝ հայրենիք, թէ՝ սիրական և թէ ինքն իրան։ Չէ, ես չուզեմ, որ դու մեկնիս, հեռանաս . . . վախենում, սոսկում եմ, չըլլայ թէ դուն ալ . . . չէ, չէ հոս իմ մօտս ապրէ, եթէ ինձ սիրում ես, եթէ կուզես որ մենք երջանիկ ըլլանք, եթէ չես ուզեր, որ կեանքը մեզ համար մահանայ, եթէ չես ուզեր . . . ։

—Իմ արեւ, ընդմիջեց Աշոտը, դու կարծում ես, թէ ես Վարդօն եմ, դու կարծում ես, թէ օտարի շացուցիչ փառքը, մեծանուն համբաւը, և կամ հրապուրիչ տեսքը կարող է ինձ գրաւել, դո՛ւ կարծում ես, թէ ես կարող եմ այլևս ուրիշին սիրել. դու քո խօսքերովը վիրաւորում ես ինձ, գիտես թէ ինչ է իմ սիրոյ ուժը, նա ամբողջ իմ էութիւնն է, իմ կեանքը և չէ՞ որ ես դեռ կուզեմ ապրիլ, ապրի՛լ. առանց քեզ կարող եմ միթէ կեանք ունենալ, առանց քեզ կարող եմ մի՞թէ գէթ վայրկեան մը երջանիկ զգալ ինձ։ Երբէք, երբէք. սա այս սիրոս, քոնն է, և քեզ կպատկանի յաւիտեան, ես միմիայն քո սիրոյն տիրապետելու համար է, որ յանձն եմ առնում այս բաժանումը, դու կարծում ես, թէ ինձ համար հեշտ է բաժանուիլ քեզանից՝ հեռու ապրիլ և քո ձայնը չլսել . . . . բայց . . պէտք է համակերպիլ սև ճակատագրի գրութեան և անողոք բաղդի հարուածին։ Ի՞նչ ըրած՝ ախը

չենք կարող միշտ տանջանքի, վշտի մէջ լողալ, գրկանքի ու տառապանքի ծովում ապրիլ . . մի տարուայ բաժանում և մենք արդէն, թէ երջանիկ ենք և թէ բաղդաւոր, միայն կրկին անգամ պաղատում եմ լսել քոյ խրախուսական ձայնը, տեսնալ ոգևորիչ ժպիտ մը քո դէմքին... և մօտենալով, համբուրեց ձեռքը ու լռեց։ Տիրեց երկու վայրկեան խորհրդաւոր լռութիւն։ Աշոտի խրոխտ ձայնի ոգևորութիւնը այն աստիճան ազդեցին Աննիկի վրայ, որ իր սիրած մարդու բերանից այդ տեսակ միահամուռ սիրամփոփ, խանդակաթ խօսքերը լսելիս, հպարտացած՝ գոհունակութեան ժպիտ մը դէմքին, ըսաւ.

—Ես քեզ սիրում եմ, Աշոտ, և միմիայն իմ սիրած մարդուս հաճոյք մը պատճառելու, խընդիրքը կատարելու վեհապանծ գոհունակութեամբ իրաւունք եմ տալիս քեզ, գնա, բայց մի՛ մոռնար իսկի, որ կեանք մը, խենթ Չահիլ աղջկայ սիրտ մը այրւում է, տանջւում. հոս՝ հայրենի կտուրին տակ մենակո՛ւկ, անտէր, որ նա էլ քեզանից աւելի պաղատագին խնդրում է խօսքդ յարգել, սէրդ չմոռնալ և անպատճառ վերադառնալ . . . ։ Եւ նա աղերսագին շարունակելով, չէր կարողանում դադել արտասուքը, որ կաթում էր մելամաղձ թախծոտ աչերից։

Գիրկընդխառն լալիս էին երկուսով։

Արշալուսեան աքաղաղի ձայնը սթափեցուց

նրանց։ Օդը սկսել էր պարզուիլ, երկնքի կապոյտը բացուիլ, ուր աստղերը նշմարուում էին երբեմն-երբեմն և սոսին երկու յոգնած, վշտահար սրտեր բաժանուում էին իրարմէ արտասուաթոր աչերօք, դառն և հոգետանջ զգացումներու տակ ընկճուած։

ՄԻՍԿ ԵԼԿԸ

Բ

Թ. գիւղի բնակիչները մեծաւ մասամբ հողագործներ էին, աշխատասէր, ընդունակ և շատ բարեսէր ժողովուրդ մը։ Գիւղը՝ իրա ըսքանչելի ծառաստաններով, կազդուրիչ ջուրերով և հազուագիւտ գեղեցկատեսիլ դաշտերով՝ առաջին տեղն էր գրաւում, իբրև ամառանոց՝ շրջակայ մի քանի քաղաքներու։ Շէնքերը կէս եւրոպական և կէս ասիական իրանց տեսքով՝ տեղւոյն բնակչաց յառաջդիմութեան դէպի լաւին ձգտում ունենալը հաստատում էին։ Յաճախ կարելի էր տեսնել երկյարկանի շէնքեր հոս հոն ծառաստանների կշտին բարձրացած։

Մ.-ենց տունն ալ եկեղեցիից քիչ հեռի, գիւղի ամենագեղեցիկ շէնքերից մէկն էր։ Ինչպէս երևում էր հինցած շէնքերի հոս-հոն ցրցուած գեղարուեստական բեկորներից, տեղացիք

ժամանակի ընթացքում ունեցեր են շքեղ կեանք և համեստ, ապահով ապրուստ։

Բայց, ահա արիւնկզակ, գազիր բռնակալի՝ Ապտիւլի հայաջինջ, բարբարոս քաղաքականութեան մահահոտ, արիւնոտ եաթաղանը սկսեր է գործել . . . աւազակներու յափշտակութիւնները, վաշխառուների անտանելի տոկոսը, աներևակայելի գետավազ տուրքերը, անիծուած կառավարութեան զօրքի ապրուստը մինչև իսկ . . և դեռ ինչեր, ինչեր խեղճ գիւղացու գլխուն դամոկլեան սուրի մը նման կախուեր են...իբրև գոշմար, իբրև հոգեառ։ Այդ դրութեամբ ինչպէս կարող էր թշուառ ժողովուրդը տոկալ տարիներ, անվերջ տարիներ . . . ։ Մի ելք, մի հնար պէտք էր և դա լոկ պանդխտութեան մէջ էին գտած։ Գնում էին 5-10 ընկերներով, գնում էին և, ով գիտէ, նրանց քանիներու հէք մօրկանց վիճակուած էր կարօտեցուցիչ արտասուքի հոգեմաշ կաթիլներով սպասել անդարձ վերադարձին, ճամբորդին, զարիպին։ Ո՛վ գիտէ քանիներ իրանց վշտահար կեանքի բօթաբեր գուժը միայն պիտի ղրկէին մաշուած, աւերակ հայրենիք, իբրև վերջին ձօն, և, ով գիտէ, ինչեր, ինչեր էին սպասում պանդուխտ զարիպներին այդ անստուգութեան, անյայտութեան թափառական կեանքում։

Բայց և այնպէս գնում էին անընդհատ շա-

ըան-շարան, խումբ-խումբ, անվերջ։

Եւ սակայն, չնայելով, որ Մ. տեղւոյն ամենահարուստներից մէկն էր համարուած, կ'յարդուէր, իբրև պատուաւոր ժողովրդասէր, իր համեստ բնաւորութեամբ, բարեկամական աչալուրջ խորհուրդներով կաջակէր բարոյապէս ամեն ընդհանրական գործի, և համակրանքն ու սէրն կվայելէր՝ ոչ թէ միայն Էրանց գիւղի, այլ և մօտակայ գիւղի բնակչաց, բայց որովհետև նա միշտ կռուողն էր վաշխառուի դաժանութեան դէմ, որովհետև նա միշտ պաշտպանն էր հէք գիւղացու չարքաշ կեանքին, հետևապէս այդ անհաւասար կռուում, հոգեպէս թեպէտ արի, բայց նիւթապէս ան ստիճան ծծուած, քամուած՝ որ ստիպուած էր միակ որդին Աշոտը, պանդխտութեան ղրկել, նրա յոյսով ապրիլ։ «Թող գնա. Ստուած հեռը, ամենը ինչ, մենք ալ ան . . . գոնէ յուսով կապրինք» մտածում էր և երբեմն կէս համոզեցուցիչ ձայնով՝

—Տէս, ասում էր Աշոտի մօրը, Պօղոսենց տղան ալ գնաց, դեռ 4 ամիս չկայ և որչափ օգնութիւն է անում. նոր ղրկած էր մի ոսկի, մօտերս դարձեալ ղրկեց, ըսել է, մեր ասան Աշոտը՝ շատ չէ, մի տարի մնալու ըլլայ, արդէն պարտքերիս կվճարենք, ձեռքերնիս քիչ մըն ալ փող կմնայ, ապահովուած կըլլանք բաւական ժամանակ։ Եթէ ոչ, սա մեր կեանքը տանելի չէ.

տոկոսը չվճարած, տուրք են պահանջում . . . տուրքը չվճարած, տոկոսը . . . ։ Բայց ամեն ամեն անգամն ալ մօր բողոքն էր լսում, թէ, ինչպէս կարելի է, իմ կաթով սնուցած, իմ խնամքով մեծցուցած զաւակս . . . օտարութեան ղրկել, հեռացնել մեզանից . . ահա, ա՛ռ իմ ունեցած զարդերս, տար ծախէ, պէտքերդ հոգա . . տոկոսդ ա՛ռ և չուզեմ իսկի քո եղն ու մեղրն, միայն իմ տղաս իմ մօտն ըլլայ, իմ աչքի առջև . . . հեծկլտալով աղաչում էր հէք կինը . . . մօր սիրտը։

— Լա՛ւ այս անգամ պէտքերս հոգամ, տոկոսս վճարեմ, առարկում, պատճառաբանում էր ծերուկը մի՞շտ, սակայն չէ՞ որ մի ամիս վերջը դարձեալ նոյն հարցը, նոյն պահանջը նոյն, դըրութիւնը. վերջը, ընկճուած ձայնով աղերսում էր մօրկանից, վերջը . . . ։

— Ի՞նչ վերջ, կեանքի վերջը մահ չէ՞ միթէ։

— Մա՛հ, այո՛, բայց չէ՞ որ մինչև այդ մահը ապրիլ պէտք է, ապրիլ . . . ինչո՞վ կարող ենք մենք, մեր գոյութիւնը պաշտպանել, ինչո՞վ կարող ենք մեր ծերութիւնը քաշ տալ մինչև մահ ինչո՞վ . . . շարժուն կայքերնիս բոլորը ծախուաւ մեր բարեխնամ Եըլոբզի կառավարիչների հրամանով, մեր պապենական մնացած հողը, մեր կեանքի, գերդաստանի պահպանիչ այդ միակ յոյսը, արդար քրտինքի աշխատանքը

գրաւ է դրուած վաշխառու տղրուկի մօտ . . . տոկոսը աճում է, վաղը միւս օր, այդ ալ պիտի գնայ մեր ձեռքէն, պիտի յափշտակեն, խլեն անօրէնները . . այն ատեն ողջ, ողջ գերեզման պիտի մտնենք թաղուինք. ի՞նչ կըսես, լաւ չէ՞, որ դրկենք մեր Աշոտին, գերդաստանի միակ արևուն, գնա՛ փող շահի և վերադառնայ, հարցուց նա կրկին Աշոտի մօրը։

—Չէ՛, թող մենք ողջ, ողջ գերեզման մտնենք կորչինք, անհետանանք, միայն թէ Աշոտս հետս ըլլայ, իմ աչքիս առջև . . . անլսելի ձայնով մը պատասխանելով լալիս էր հէք կինը։

Երկուսն էլ լռեցին։ Կարծես երևում էր իրանց հոգեկան զգացումների թողած դէմքի տրտմութիւնից՝ որ հայրը մօրն է իրաւունք տալիս, իսկ մայրը՝ հօրը։ Այն տեսակ անելանելի դրութիւն մը ստեղծուած էր, որ դժուարանում էին մի վերջական վճիռ տալ։

Թուխպ, մութ ամպերով ծածկուած արևը կամաց-կամաց դուրս էր ցցում իր կենսատու ճառագայթները, ազատում էր իրան սև քօղից։ Այդ լարուած բոպէին չնկատեցին, թէ ինչպէս արևի կենդանի նայուածքը պատուհանից ներս մտաւ ու խայտում է օդոյ պտոյտներում. չնկատեցին, թէ ինչպէս դարձեալ ծածկուեց, դարձեալ ազատուաւ. ո՞վ գիտէ ինչի մասին էին մտածում, ո՞ւր էին գացել իրանց յուշերը, երևա-

կայութիւնները . . :

Մեծ գիւտ մը գտածի նման, յանկարծ հիասթափուած խօսեց ալեոր ծերուկը. «Թողունք Աշոտի կամքին. կուզէ կգնայ, կուզէ կմնայ, չըլլար, խաթուն:»

—Նա ուզում է, ասաց խեղճ կինը, որդին մահի ճիրաններից փրկողի մը խելագար ձայնով, նա ուզում է, բայց, ջահիլ է, անփորձ է, խելքը չի կտրում . . և սկսաւ հոնգուր-հոնգուր լալ՝ որդւոյ ապագայ անորոշ կեանքի հեռանկարից սարսափած:

Ալեհեր ծերուկը երբ տեսնում էր, որ այլևս անկարող է մխիթարել ցաւատանջ մօրկան զգացումները, մտախոհ դիտում էր պատուհանից հեռաւոր անյայտութիւնը, ուր պիտի մեկնէր իր որդին՝ Աշոտը:

ՄԵԿՆՈՒՄԸ

Գ

Արշալոյսը դեռ նոր էր սկսեր բացուել, դեռ արևի կենսատու ճառագայթները չէին սկսեր սփռել իրանց աղօտ լոյսը, երբ կարաւան մը բեռնաւորուած խումբ մը կտրիճներով, վերջին հրաժեշտն էր տալիս պապենական տան, մանկութեան օրօրանին:

28086

Տիրած էր մեռելային խոր լռութիւն։ Եւ այդ խորհրդաւոր լռութիւնը խանգարող մը չկար. ամենն իրա հոգեկան զգացումներու հետ զբաղուած՝ կարծես չէին հաւատում, որ իսկապէս հեռանում են՝ մեկնում, եթէ սայլի անիւների միատեսակ ճռքռոցը չ'գար յիշեցնել, որ այո, իսկապէս գնում են, մեկնում...։

Աշոտը, տեսակ մը թմրութիւնից, անբացատրելի անորոշութիւնից սթափուածի մը նման, դիտում էր հեռաւոր հորիզոնում հայրենի կապոյտ կամարը, հազիւ նկատելի ամպամած լեռները, երբ, ահա նկատեց հինաւուրց կաղնին, ուխտավայրը։ Եւ զգացումներու ուժեղ հոսանքի ազդեցութեան տակ, անկարող զսպել ինքն իրան, սրտի թալկութեան խորքերից, ա՜խ, մը քաշելով, վերջին հայեացք մը ձգած ասաց.«Ինաք բարեւ լեռներ, մանկութեան զբօսավայրք, ես գնում եմ, բայց դո՛ւք իմ տեղը խօսեցէք իմ անդինի հետ.. ամեն մի քայլափոխում իմ սէրը պատմեցէք, ո՜հ, եթէ երբէք կարօտի արտասունք դայ թափել ձեր վրայ՝ մի՛ ընդունէք, յիշեցուցէք իմ սէրը... իմ խօսքերը... ինձ տեսնալու, իմ ձայնը լսելու փափագին զոհացնում տուէք՝ հեռուները սէր երգող թռչուններու դայլայլը հովահարելով տանջուած սրտիկին... թող գիշերը սիրաերգ լուսինը սրտի խորը թափանցած նազելի փայլով իմ սիրոյ անկեղծ, մաքուր ըլլալուն զգացմունքը անխախտ

պահէ և ցորեկը ձեր տեսքը, մեր սէրը երգէ, մինչև, որ վերադառնամ...» այսպէս խօսում էր, ինքն իր արթնցած սրտին հետ և այն աստիճան գացած անուրջների ոսկի աշխարհը, որ իսկի չէր լսում իր ընկերների տաք վիճաբանութիւնը, երբ Խաչիկը —այդպէս էր ընկերների մէկին անունը—դառնալով՝ ասաց. —Ի՞նչ ես կարծում Աշոտ, ինչպէս կըլլայ հետևանքը, թուրք կառավարութեան բռնած կործանարար ընթացքը հայերուս հանդէպ, որ այսքան չ'գրուած, չ'տեսնուած անգթութեամբ տանջում, հալածում է մեզ.. մեզ վթարում է մեր բնիկ տնից՝ հայրենիքից, մեր կալուածքը խլում է, ինչքը, կայքը, յափշտակում, գեղեցիկները առևանգում, էլ որ մէկը յիշեմ դու ինքդ լաւ գիտես։ Իմ կարծեօք, մենք իբրև սորուկներ յաղթուած՝ գնում ենք փախչում, ասպարէզը թողնելով մեր դարաւոր, նենգ թշնամիներին, որպէսզի իրանց կամքի համաձայն ազատ գործեն, իշխեն. այնպէս չէ՞, ինքավստահ ձայնով մը հարցուց աւելի քան համոզուած, որ Աշոտը իր կարծիքին համամիտ է։

—Չէ՞ որ մենք գնում ենք ոչ թէ չ'վերադառնալու պայմանաւ՝ այլ նիւթապէս և գիտապէս ուժեղանալու և, վերադառնալով, աւելի մեծ ծառայութիւն մատուցանելու ազգին, հայրենիքին. մէջ մտաւ Նազարը։

—Այո, իրաւունք ունի Նազարը, քանի ասում

է, թէ հարուստ վերադառնալով, աւելի մեծ ծառայութիւններ կ'մատուցանենք ազգին...հայրենիքին...իմ կարծեօք մեր դրացի թուրքերը պիտ զարմանան մեր ունեցած ընդունակութեան վրայ, որ մի քանի տարուայ մէջ հարստացեր, օտար եւրոպական լեզուների հետ ծանօթացեր, գիտնականներ դառուցած եկեր ենք ժողովուրդը կրթել.. օգնել.. կարեկցել... պատճառաբանեց Սեդրակը, որ ընկերների մէջ թեթեւսոլիկի համբաւն էր վայելում իրա անորոշ և հակահայեացք կարծիքներով։

—Բայց չէ՞ որ մեր բացակայութեան, մեր հեռաւորութեան շնորհիւ, մեր թշնամիները, արիւնռուշտ բռնակալ կառավարութեան որդեգրերը, գործում են, աւերում, ջարդում անխնայ մեր շէն գիւղերը, մեր մշտավառ օճախները մարում, աւերում են... փլատակուած մոխրակոյտներու մի թէզ՝ իրագործուած բարբարոսութեանց մի մահասառուռ յիշատակ թողնելու է միայն.. և ի՞նչ պիտ ընեմ այլևս քո հարուստ վերադարձը, քո մի քանի լեզուներից մի քանի բառեր գիտենալը, օտար աւելի փառաւոր կեանքի հետ ծանօթանալը.. ըսէք. կրնանք՞ այլևս այդ մոխրակոյտներու արիւնոտ դէզին վրայ նոր կեանք հիմնել, նոր շէնք կառուցանել... չէ՞ որ այդ դեռ չ'մարած՝ տաք մոխիրների միջի վրէժի, վրէժի ձայնը միայն պիտի լսենք.. և սակայն

հարց է. պիտ կրնանք այլևս վրէժ լուծել, երբ պարտուած ենք. երբ գերեզմանն է թագաւորում մեր պապենական շէն, կենսատու վայրերում։ Իմ կարծեօք, խրոխտ, վեհերական ձայնով՝ հայրենասէրի բուռն ոգևորութեամբ խօսեց Խաչիկը՝ քանի պարտուած մեկնում ենք, պէտք է, անհրաժեշտ է, որ ծանօթանանք մեր ազգին, հասարակութեան օգտին ծառայող նոր ուժերու, երիտասարդ մարմիններու հետ, գործենք նրանց շաւիղով, գնանք նրանց վեհ ճանապարհով, որպէս զի կարող ըլլանք հիմքից, ժողովրդի ուժեղ աջակցութեամբ քանդել այս չտեսնուած հարստահարութիւնների, չտեսնուած արհաւիրքների բունը . . . Երլտրզ Գէօշկը։

— Ո՞ւր տեղ են այդ նոր ուժերը, նոր երիտասարդները, որ գան մեզի օգնութեան և թէ ինչու համար մինև հիմա եկած չեն օգնութեան. հեռաքրքրուած հարցուց թեթևսոլիկ Սէդրակը, որ, կերևի, խօսուածքից ոչինչ չէր հասկանում։

—Նրանք, այդ նոր ուժերը, հոն, Արարատեան դաշտում են, Կովկասեան հսկայ բարձունքների լանջին, միջամտեց Թորոսը, բայց ոչ թէ նրանք պէտք է գան օգնութեան, հապա մենք մենք պէտք է գնանք նրանց օգնութեան. նրանք այնքան կկարօտեն օգնող ուժերի։ Մեզ մի միայն պէտք է նրանց ընդդրկած շաւղից գնալ, արդէն մենք նրանց՝ և նրանք մեզ օգնած կըլլանք

փոխադարձաբար։ Բոլոր ազգերու մէջ ալ, ոգեւորուած շարունակում էր Թորոսը, այդ զգայուն նոր ուժերը, երիտասարդներն էին որ յեղաշրջեցին կեանքի սխալ ըմբռնմանց հետեւանքները, նրանք էին, որ որոշ չափերով տանելի կեանք մը ստեղծեցին իրանց արենակիցներուն, միայն մենք մնացեր ենք աշխարհի խորթ և անբաղդ որդիքը։ Ուշացեր ենք բայց և այնպէս, եթէ առանց վհատելու անընդհատ շարունակենք մեր նոր վարժապետների ճանապարհով, վստահ եղէք, մեզ համար էլ կծագի արև մը բաղդի և երջանկութեան։

Դուք կարծում էք թէ, միևնոյն արհաւիրքները, վաշխառութիւնները, բռնակալութիւնները հոն, այդ հիմակուան մեզանից աւելի բաղդաւոր ազգերու մէջ չկա՞ր, թէ նրանք առանց արեա՞ն, կռի՞ւ, առանց զոհերու տիրապետեր են, կ՚սխալիք. նրանք, դեռ սրանից մի քանի դարեր առաջ... ուզում էր ոգեւորութեամբ շարունակել, երբ մինչև հիմայ լուռ, մտախոհ նստած Կարապետը՝ ընդմիջեց.—Իսչո՞ւ համար այդ հզօր ազգերու գիտակից տարրերը չեն եկած մեզ օգնութեան, չեն փրկած զուլումի երկիրն էլ լպիրշ բռնակալի մահահոտ եաթաղանէն . . ախր չէ՞ որ մենք ալ նրանց նման մարդ ենք, քրիստոնեայ, չէ՞ որ քրիստոնէական վարդապետութիւնը քարոզում է, օգնել թշուառին—հա՞ Թորոս,

ըսէ, ինչու համար չեն եկած օգնութեան, հարցուց, և այն տեսակ նայուածք մը ձգեց ընկերներու վրայ, որ կարծես թէ, մի ինչ որ հրաշք էր խօսածը և կամ ոչ-ոք այդ հարցը չէր կարող տալ...։ Մի քանի վայրկեան տիրեց խոր լռութիւն։ Հեռուից լեռների լանջին ոչխարներ արածող հովուի սրինգի սուր մեղեդին, ոչխարներու մայիւնի հետ միախառնուած, ներդաշնակում էր նահապետական կեանքի գովքը, հմայքը, այդպէս նուագի և մայիւնի մոգական ազդեցութեան տակ աւելի եռանդուն շարունակեց Թորոս.— Իրերու և անցքերու որոշ պատկերը չ'հասկանալուց առաջ քայլեց այդ հարցը, թէ ինչու համար օտար բաղդաւոր քրիստոնեայ ազգեր չեն գալիս մեզ օգնութեան, թէ ինչու համար մեզ ալ չեն բաղդաւորեցնում իրանց նման....։ Ախր այդ միլիոն է, ինչ որ, մերոնը ուժեր—երիտասարդները, պիտի օգնենք նրանց մեզ փրկելու համար... եթէ չենք ուզում մենք մեզ օգնել ինչպէս, կարող ենք օտարից պահանջել բաղդ, երջանկութիւն. ճիշտ է, որ ընդհանուր աշխարհ բոլոր ազգերու մայր հայրենիքն է, որ ամենն ալ եղբայրներ են, բնական ցեղակիցներ... բայց դեռ շատ, շատ հեռի է այն օրը, երբ ընդհանուր մարդկութեան ազատութեան արշալոյսը պիտի ծագէ համահաւասար, ինչպէս արևի լոյսը, ինչպէս գով օդը...

գեռ շատ հեռի է այն օրը, գուցէ, մի քանի դարով ծածկուած, երբ մարդիկ անխտիր, առանց ազգութեան զանազանութեան, եղբայրական ջերմ սիրով պիտի գերկընդխառնուին, պիտի միանան, ես կարծում եմ, առաջինը մենք կըլլայինք գըլխաբաց ծնկակոչ համբուրելու ազգութիւններու միաբերան Ս. սեղանը, համերաշխութեան միակ նուիրականութիւնը, բայց.. գեռ շատ հեռու է, այդ երջանիկ, ցանկալի օրը . . . մեզ նըման ազգի մը կ'մնայ լոկ իր թշուառ արենակցներու վշտերն կարեկցել, օգնութեան հասնել... չէ՞ որ մենք ալ աշխարհի բոլոր մարդկութեան մէջ տեղ ենք գրաւում, ըսել է, մեզ օգնելով և ընդհանուր գործերու ալ ծառայած կըլլանք, իսկ եթէ մենք չենք կամենում մեզ օգնել, ուրիշ ազգերու օրինակին հետևելով, ինչ իրաւունքով նրանցից՝ մեր բաղդը, կեանքի ապատութիւնը խնդրենք, նրանց աղերսենք։ Մենք միմիայն մեր վրայ յոյս պէտք է դնենք, միմիայն մեր վրայ... եթէ ամեն անհատ իր պարտականութիւնը անթերի կատարէ, ոչ թէ միայն աշխարհ, այլ երկակայած դժոխքն ևս մինչև իսկ արքայութիւն, դրախտ կըդառնայ. որքան խօսենք, վիճենք, այնքան պարզուում է մեր հասարակութեան հոգեբանութեան թերի կողմերը. հիմա համոզուած, որ ընկեր Խաչիկը իրաւունք ունէր ըսելու, որ մենք իբրև տարուկներ, պար-

տուած թշնամիներից՝ փախչում ենք.. մեկնում... ամօթ է մեզ հազար ամօթ. բայց որովհետև ինչ ալ խօսենք, համարենք, համոզուենք, ալ ուշ է և մենք գտնուում ենք պարտուած դրութեան մէջ, ուստի մեր ամենամեծ կարճիութիւնը, խիզախութիւնը՝ հայրենիք վերադառնալով ալ աւելի մեծ ծառայութիւն մատուցանելու մէջ պիտի ըլլայ և ես աւելի քան վստահ եմ, որ օտարի փառքը, գրուիչ գեղեցկութիւնը, մեծանուն համբաւը չ'պիտի կարող ըլլան հրապուրել մեզ և, մենք վերադառնալով, ալ աւելի մեծ ծառայութիւն կմատուցանենք ցաւատանջ ազգի մը վշտաբեկ հայրենիքին՝ մատատանջ վերջացուց Թորոսը։

Աշոտը լռած մտիկ էր անում և ինչեր չէին անցնում նրա մտքէն. նա լուռ էր, բայց վիճաբանութիւններու ազդեցութիւնը իրա կրթիչ դրոշմը դրեր էր արդէն նրա զգայուն սրտում։

Ընկերները ճանապարհին մինչև վերջ վիճում էին անընդհատ, կարծես մի մեղսալից յանցանք էին գործած ու վիճաբանութեամբ աշխատում էին թեթևացնել իրանց սրտի բեռը, յանցանքը։

ԳԱՆԴՈՒԽՏԸ

Դ

Անցեր էր ամիս մը այն օրից, որ Աշոտը մեկնած էր հայրենիքից և թափառում էր Բ. անծանօթ քաղաքի փողոցներում։ Թողունք ընկերները, որք տասնեակ մը օրեր անգործ յուսահատուելէն վերջ՝ նեռուած էին հսկայ կեանքի ծովը, դեգերելով, անստոյգ կեանք, բաղդ որոնելով հեռաւոր վայրեր, անցնինք Աշոտին, որ մեր վէպի հերոսն է։

Աշոտը չէր ուզած շատ ներսերը, հեռունները գնալ և որոշած էր սպասել մի քանի օրեր ևս, մինչև որ բաղդը ժպտայ։ Մխիթարւում էր խորհելով, թէ աւելի լաւ է ուշ հոս գործ գտնալ, սահմանի մօտ, քան թէ հեռունները. ինչու որ մտածում էր, որչափ հեռանամ իմ թանկագին հայրենիքի շէմքից, էնքան շուտ կը մոռանամ, էնքան շուտ սէրս կպաղի։

Քանի օր է ուզում է նամակ գրել, իմացնել իր ինչ դրութեան ըլլալը, յուսադրել տնեցւոց ևս, բայց ինչ գրէ, ինչպէս բացատրէ։ Ա-հա, այսօր, վաղը գործի կըլլամ, քիչ ալ դրամ կշահիմ, այն ատեն իրաւունք կունենամ նամակ գրելու, հիմա ինչ երեսով գրեմ . . . ինչ գրեմ, չպիտի ըսեն թէ, որչափ անպէտք, ծոյլ,

տգէտին մէկն է, որ առաջի նամակը առանց փոդի է գրում... և այս տեսակ մտածմունքներով իր եսասիրութիւնը չվիրաւորելու համար, վճռում էր տոկալ, համբերել, սպասել։
Պէտք է ասել, որ այդպէս մտածելու որոշ պատճառ ունէր, ինչու որ այնպէս համոզուած էին հայրենիքում, թէ օտարութեան մէջ փողը շուկայում է փռուած, միմիայն պէտք է հաւաքել, ժողվել, իսկ ով չէ կարողանում, նա կամ յիմար է և կամ տգէտ։

Մանաւորապէս պէտք է շեշտել այս կէտը, որ իսկապէս հայրենիքում համոզուած էին, թէ օտարութեան մէջ փող, դրամ շահելը՝ ջուր խըմելու չափ դժուարութիւն չունի. այն օրից, որ մէկը մեկնում էր պանդխտութեան, օրերի հետ և համարում էին նրա վաստակը, կարողութիւնը և եթէ նամակ ալ չէին ստանում, կային այնպէսներ, որոնք վերագրում էին թէ այնչափ փող կայ, որ հաւաքելու ժամանակ մինչև իսկ չունին իրանց սիրելիներուն նամակ գրելու, և սակայն այդպէս խորհելու, մտածելու շարժառիթն էլ հէնց իրանք օտարութեան դիմողներն էին... ով էր նկարագրում իր չարքաշ, տուայտող կեանքը, ով էր պատմում իր քաշած տառապանքը, թշուառութիւնները և ինչպէս կրնային պատմել, երբ իրանց ապրած մթնոլորդը այն տեսակ վարակիչ դրութիւն մը ստեղծած էր, որ հեգնան-

քի, ծաղրի առարկայ չըլլալու համար, ստիպուած էին լռել, որպէսզի կեղծ յարգանք, խաբուսիկ պատիւ վայելեն... արդէն աշխարհի քանի տոկոսն է ճշմարիտ պատիւ, անկեղծ յարգանք վայելում։ Այդ հեղգուցիչ մթնոլորդի մէջ մեծցած Աշոտն էլ՝ շրջապատի կեանքից տարուած, այդ ստոր հոգեբանութեամբ լեցուած, այդպէս էր մտածում, թէկուզ յակամայ։

Իսկ օրերը անցնում էին տաղակալի՛, սըրտամաշ, անգործ, միատեսակ։

Առաւօտ մը սովորականի նման սրճարանի հեռու անկիւնում մենակ նստած խոր մտածման մէջ տանջւում էր հոգեպէս, երբ սրճարանատէրը մօտենալով. «Աշոտ, ասաց, քեզ համար մի գործ կայ իմ վաղեմի ծանօթ՝ Պ. Կարապետովի վաճառատան մէջ ծառայելու. ինքը խղճի տէր, ազնիւ բնաւորութեան մարդ է, քիչ մը կրքոտ՝ բայց վստահ եմ, որ քո համեստ, հաւատարիմ բնաւորութեամբ լաւ վարձատրութեան կարժանանաս և ես խօսք տուի, որ կգնաս աշխատելու» համոզեցուցիչ եղանակով մը ասում էր Աշոտին։ Այս ուրախալի, անսպասելի լուրը իմանալուն պէս հրճուանքից չէր գիտեր ինչ ընէ, ինչպէս շնորհակալութիւն յայտնէ. — «Քո ծառան եմ, աղա՛, ինչպէս որ կհրամայես» ստրուկ ձայնով մը պատասխանեցնա և իսկի չհետաքրքրուեցաւ, թէ ինչ գործ է, ինչ պիտի ընէ, ո՞ր Կարապետովի վա-

ճառատան մէջ պիտի ծառայէ. հերիք է որ գործ մը գտաւ աշխատելու, հետևապէս սկսաւ երևակայել, որ քանի մը օրից իրաւունք պիտ ունենայ նամակ գրելու։

Արդէն երկու ժամ վերջը Կարապետովի վաճառատան մէջ ծառայում էր։ Կարապետովը ինքը գեր, ոչ այնքան բարձր հասակով, կլոր դէմքով, խորամանկ նայուածքով, կրքոտ ծանր ընաւորութեան տէր մարձան մին էր։ Նրա համար երբէք նշանակութիւն չունէին ոչ մարդկային զգացմունք, ոչ ընկերի պատիւ, ոչ կարօտեալի գութ։ Նա միմիայն իր շահով տարուած՝ մեռադապաշտ գաճաճ մին էր, եթէ կարելի է այսպէս անուանել, սակայն Աշոտ վրատահելով «ազնիւ ընաւորութեան», երբէք չէր կասկածում անարժան վարձատրութիւն ադայի կողմից։

Եւ այսպէս հլու, հաւատարիմ ծառայում էր, այս քանի շաբաթներ է, ամեն օր ուզում է մի քանի կոպէկ փող խնդրել, բայց ամեն անգամ էլ նկատում է, որ, երբ հարցը դալիս է բարեսրտութեան, խղճահարութեան, դէմքը խոժոռած, կէս բարկացած հայեացքով, չէ ուզում լսել և կամ չիմանալ է ձևացնում։ Ի՞նչպէս ընել, տէր Աստուած, մտածում էր հէք Աշոտը, այս անգամ գոնէ քիչ մը գումար առնէի. ալ չէի ուզիր մինչև մեկնելս կսպասէի . . կսպասէի, բայց

հիմա ինչպէս նամակ գրեմ, եթէ բացատրեմ, որ առաջի անգամ ըլլալով չյանդգնայ փող ուղել, ինչ կըսեն. չպիտի ըսեն թէ գործի յախէ չեկող, ծոյլ, անընդունակ մէկն է, որ չէ վստահանում իր աշխատութեան արդիւնքը պահանջել, այս քանի նամակ է գրեցի, պատռեցի, գրեցի պատռեցի, չէ՞ որ վաղ թէ ուշ պէտք է յանդգնիլ. էլ ինչո՞ւ կսպասեմ, ինչո՞ւ։

Ծանր բեռան տակ ճնշուողի մը վճռական ժէսթով մօտեցաւ Պ. Կարապետովին։

—Նամակ գրած եմ, ձեր գթահայց օգնութեան կսպասեմ նամակս գրկելու համար, վճռական բայց մեղմ ձայնով խօսեց վերջապէս։

—Հա՛, ինչ է ինչ կուզես, բարկացող և խոժոռ նայուածքով մը հարցուց Պ. Կարապետովը։

—Հայրենիքում իմ յոյսով ապրող թշուառ ծնողացս օգնելու համար քիչ մը փող եմ ուզում խնդրել։

Ե՛րբ Կարապետովը նկատեց Աշոտի ժեսթը և վճռական ձայնի թոնը, ասաց.

—Հա՛, լաւ, առ՝ հինգ ռուբլի, ճամբէդ, բայց ուրիշ անգամ ինքդ մ՛ուզեր, ես ինքս կ՛ուտամ, ակնարկելով երկնցուց, իբրև ողորմութիւն։

—Շնորհակալ եմ ապա՝ Աստուած մէկդ հազար ընէ, արեգ շատ ըլլայ, օրհնելով առաւ դրամը և զգացուած անհուն ուրախութիւնից չէր գիտեր,

ինչ ընէ. պարէ, երգէ, անմիջապէս և եթ ուզեց վազել պօստատուն, բայց ժամանակը անցած ըլլալուն՝ մնաց վաղուան։

Այդ գիշերուայ ունեցած երևակայութիւնները, երազները, անկարող է իմ թոյլ գրիչը նկարագրել, պետք է ըլլալ պանդուխտ և այն էլ Աշոտի նման, որ երազուի։ Միայն աս պարզ յայտնի է, որ անհամբեր, անքուն սպասում էր լուսնալուն. ինչու որ այլևս իրաւունք էր ստացած գրած նամակը ղրկելու։

ՏԱՆՐ

Ե

Աշոտին մեկնելու առթիւ տան դրութիւնը բոլորովին ուրիշ կերպարանք էր ստացեր. տնեցոց և ոչ մէկի դէմքին կարելի էր տեսնել ժպիտ, ծիծաղ. կարծես մի ինչ որ տեսակ մը սուգ, ցաւ տիրած էր խմբնոլորդը։ Աշոտի բացակայութեամբ չկար տան ծաղիկը, մօրը կեանքը, մօրը յոյսը, հեռևապէս և ժպիտ և ծիծաղ։

Նամանաւանդ՝ մտատանջութիւնը սկսաւ աւելի սաստկանալ, երբ անցնում էին օրերը շաբաթները և ոչ մի նամակ, տեղեկութիւն չկար, գոնէ լոկ չոր նամակ մը չ՚գրեց, որ

հանդստանային անվտանգ տեղը հասնելէն։

— Ըսի ալ թէ չուզեր, չհեռացնենք մեր քովից ջահելը, դեռ շատ անփորձ երիտասարդ է, գլխուն ինչ փորձանք կուգայ այս տաեն, խօսէ ինչու լռած նայում ես . . . բարկացած և պահանջկոտ ձայնով մը դիմեց Խաթունը ալեհեր ծերին, որ, մտախոհ հայեացքով կայնած պատուհանի առջև, նայում էր հեռաւոր հորիզոնին, ուր մեկնած էր իր որդին, մինուճարը, Աշոտը։

— Էյ Աստուած ողորմած է, այսօր վաղը նամակ կ՚ստանանք. մեծ է զօրութիւնը բարձրեալին, միթէ չկայ աստուածային ճշմարտութիւն, մարդկային զգացմունք, գութ, խիղճ, ինչ ըրած ենք... արդարութիւն և բարութիւն ընող ծերութեան վարձատրութիւնը լաւն ու սուրն են միմիայն . . . ալ չկայ աստուածութիւն, ճշմարտութիւն , գութ , զգացմունք , դէհ այն ժամանակ կործանուէ աշխարհ, քո տանջանքներով... քո տառապանքներով քո զուլումներով.. և թող նոր աշխարհ մը, նոր երկրագունդ մը շինուի, այսուհետև իր փորձութիւններուն, իր ակնատես սխալներուն վերջ տրուի աստուածութեան շնչով։ Եթէ ոչ այս աշխարհը զուլում է, զուլում, տանջանք է տանջանք, ցաւ է ու ցաւ . . . նախախնամութեան հանդէպ բարկաձայթ ձայնով մը սկսաւ բողոքել ալեոր ծերուկը։

—Հիմա այդ անարդարութեան դէմ բողոքելու ըոպէն չէ. ես խաղրիկ եմ ուզում, աղայէն լուր..... ինչ կընէ արդեօք, որն կամքին գերին է. ինչու նամակ չէ գրում.. չ'գիտեր, որ իրա նամակի կարօտով ենք տանջւում... չոր նամակը կարող է մեզ ափսոսել.. մխիթարել... ինչու այդքան անգութ է գանւում... ինչու... հազիւ լսելի ձայնով մտահոգում էր Խաթունը, վախենալով, որ ծերուկը չիմանայ իր ձայնը ուժ աւելի չ'գալարուի...

Օդը մռայլ խաւար էր ու խաւար երկնքի վրայ մի կապուտակ ջինջ չէր մնացած. բոլորովին ծածկուած էր մութ, թուխպ ամպերով, թռչուններու կենդանարար դայլայլը չէր լսւում, եթէ չ'յիշենք մի քանի ճուռան թռչուններու ճուռոցը, որոնք կարծես ճիւղէ-ճիւղ թռչելով, ուզում էին հաստատել, որ այդ խաւարի մէջ էլ դեռ կեանքը գոյութիւն ունի... Օդի ճնշիչ տպաւորութիւնից ծերուկը ազդուած՝ ըսաւ.

—Էֆ ինչ լաւ է Խաթուն, չեռ տեսնում օդի հեղձութիւնը.. ուզում է ճիշտ և ճիշտ մեր սրտին նմանել, մեզ ընկերակից ըլլալ.. մութ, ցաւատանջ..

—Ինչ ընեմ օդի կարեկցութիւնը.... մեր զգացումներու համապատասխանելը.. թող ամենակարող Աստուած ինքը կարեկցի մեզի.. օգնութեան գայ... այ, այն տեսն ուրիշ հարց, ես կարծում

եմ,... մեղայ, մեղայ մեղաւորիս, Աստուած ինքը մեզ համար ստեղծած զուլումի տանջանքները չ'պիտի կրնար տանել, համբերել—աղիողորմ վախկոտ ձայնով ընդմիջեց Խաթունը.— այնպէս, որ իր ըսածները միայն ինքը իմանայ. ոչ Աստուած և ոչ ալեոր ծերուկը... եթէ ոչ Աստուծոյ վրէժը սարսափելի է, մտածում էր, սարսափելի...

Այդ տխուր և հոգեմաշ զգացումներով լեցուած էին, երբ յանկարծ ներս մտաւ Աննիկը, որուն գալը մասամբ մը թեթևութիւն էր բերում թշուառ ծնողաց սրտին։ Իրաւամբ, եթէ վերջերս մխիթարութիւն մը ունէին, դա լոկ Աննիկի, իրանց ապագայ հարսի ներկայութիւնն էր։

Նրանով իրանց պանդուխտ որդւոյ կարօտը յագեցնում էին։ Աշոտի մայրը արդէն սկսեր էր նկատել, թէ ինչպէս շատ անգամ նա տխուր է, մտածկոտ.... ինչպէս շատ անգամ ուզում է մի ինչ որ հարցնել.. մի ինչ որ իմանալ... հասկանալ, ու չէ յանդգնում։ Խեղճը, մտածում էր. «Արդեօք նա էլ ինձ նման տանջւում է սիրականի կարօտով.... արդեօք նա էլ ինձ նման կարօտի արտասունքներ թափում է գաղտնի.. մենակուկ» և անպատճառ վճռում էր, «եթէ նամակ գայ, ամենէն առաջ ապագայ հարսիս պիտի հաղորդեմ, իմ տղիս փոխան՝ նրա վշտին վշտակից, ցաւին ցաւակից պիտի ըլլամ»։

Իսկապէս ալ Անտիկը եկած էր մի տեղեկութիւն, լուր առնելու. նամակ կա՞յ, թէ՞ ոչ, ի՞նչ է գրում, բայց չէր յամարձակում, չէր յանդգնում որևէ բան մը հարցնել։ Եւ այդ հարցը միտքը եկած ժամանակ՝ կարմրում, գունատուում էր։ Ալ ի՞նչպէս կրնար հարցնել, երբ զգում էր, հոգին դող պիտ զգայ... լեզուն կակազէ... Այսպէս մտածելով կայնած էր՝ սիրոյ տանջանքի դրօշմը դէմքին, յուսալով, որ Խաթունը մի բան կ'հարցնէ.... չէ, որ ինքն էլ աղջիկ է եղած, ինքն էլ է սիրած... բայց սիրականից հեռու ապրած է, նրա կարօտով տանջուած է, դա չ'գիտեր և սկսաւ դարձեալ մտատանջուել... երբ, Խաթունը դառնալով Անտիկին ասաց.

—Հարսս՛, քո արևին մատաղ, քո կոխած հողին զուրպան, դեռ նամակ, լուր մը եկած չէ, դեռ կանուխ է, այսօր, վաղը կ'ուզայ, հոգ մ'ըներ.. առաջին անգամ քեզի իմաց կուտամ, քեզի.— ասելով գսպեց յուզմունքը, մօտենալով համբուրեց նրա այտերը և սկսաւ շոյել գանգուրիկ, շեկահեր մազերը... ։

Անտիկը, որ զգում էր իրա հոգեկան զգացումներու փոթորկուելը՝ Խաթունի խօսքերից կէս մը սիրտ առած, կէս մը քաջալերուած ձայնով հարցուց. «Մայրիկ. հա՞... նամակը երբ ստանաս, ինձ ցոյց կ'ուտաս, չէ՞.. դու ասիր, ասիր, որ նամակը ինձ ցոյց կուտաս, չէ՞...» և

երևում էր, որ ուզում է մի ինչ որ է ասել.. բայց չ'կարողացաւ՝ և, շտապով համբուրելով մայրիկին ձեռքը, դուրս ճամպարեց.. զգալով, որ չ'պիտի կրնայ զսպել իր արտասունքը... :

Խաթունը և ծերը աղջած դիտում էին իրանց ապագայ հարսին, որ խելագարի նման վազում էր այն արահետից, ուրկէ իրանց Աշոտին հետ շատ յաճախ կարելի էր տեսնալ.... Արդեօք Աննիկը վազում էր հինաւուրց կաղնիի մօտ, ուխտավայրը... :

Գլխակախ դիտում էին, մինչև որ նա անհետացաւ։ Երկուսն էլ առանձին, առանձին վեր յիշեցին իրանց երիտասարդական սէրը... կեանքը... և ոչ ոք չէր ուզում խօսել, ոչ ոք չէր ուզում այդ անուրջ վերապրումների լարուած դրութիւնը խանգարել... Որչափ կ'ուզէին, որ այդ բոպէն երկարէր, թէկուզ դարեր... կ'երևի, որ իրանք այդ դրութեան մէջ երկար կ'մնային, եթէ դուրսի տեղատարափ անձրևը չ'սթափեցնէր նրանց։ «Ահա, Խաթուն, մեր տեղը երկինքն է լալիս, տեսնում ես» ասաւ, և այժմ միայն նկատեց, որ Խաթունը գացած էր իր առանձնասենեակը.. Յուսահատ մօտեցաւ պատուհանին և սկսաւ դիտել լացող երկնքի կաթիլներուն. «Լաց, լաց, միևնոյն անօգուտ է, սիրտս չի հովահարում, զգացումներուս թախիծն չի թեթևանում»—խօսում էր ինք իրան։

Համարեա, ամենօրեայ տնական աշխատութիւններից վերջ, սովորութիւն էր դարձած՝ մտածել... խորհել... տանջուել սրտամաշուք հարցերով։

Իսկ օրերը անցնում էին, տաղտկալի, ցաւատանջ...։ Այդպէս օր մի՝ սրտամաշ հարցերի վշտաբեկ տպաւորութենէն յոգնած՝ լուռ, մտախոհ նստած էին, երբ ներս մտաւ դրացի Մկոյին մանչը, որ քաղաք էր գնացած առօրեայ պէտքերի համար։ Իրանց գիւղի հետ առնչուր ունեցող խանութպանը, նամակ մ'էր տուած Մ-ին յանձնելու համար և այդ էր, որ վերադառնալիս գիւղ, անմիջապէս եկած էր նամակը յանձնելու... - «Աչերնիդ լոյս, Աշոտէն նամակ կայ Ձեզ» ըսելով, յանձնեց նամակը։ Ուրախութիւնից չ'գիտէին, թէ ինչ անեն, լա՞ն, ժպտի՞ն... ինչպէս շնորհակալութիւն յայտնեն։ Նամակ բերողը իրանց աչքին եղած էր հիմայ մի ռահվիրայ, մի հերոս...

— Բա՛ց, բաց նամակը կարդա՛, քո հոգուն մատաղ, ինչ է գրում, ինչ է անում իմ տղան, իմ հոգին... դողդողալով աղերսում էր մայրը...։

Կարդացին նամակը, ուր որդին գրում էր իր անվանգ հասնելը, տպաւորութիւնները, բաւական դժուարութիւններից վերջ՝ գործ գտնելը, ընկերների հետուներ մեկնելը, մենակութեան դալկութիւնը, սիրականին կարօտը, ծնողաց սէրը, տպագայ ցոյները, գրկած փոդը..... Նամակը

վերջացնում էր. «Մտեր դարձեալ կղզիմտով և բարևներով։

Աննիկը արդէն իմացեր էր նամակի դալը։ Ուրախութիւնից, քաշուած մի գաղտնի անկիւն, լալիս էր։ Դա կարօտի և սիրոյ, վշտի և հրճուանքի խառնուրդ արտասուք էր։

ԿԱՐԱՊԵՏՈՎԸ.

2

Նամակ ղրկած օրէն ասղին, Աշոտը, կարծես, նոր եռանդ, նոր ուժ էր ստացած. աշխատում էր մեծ հաճոյքով։ Ամենածանր աշխատութիւնները մինչև իսկ թւում էր իրան, իբրև մի խաղ։ «Ամեն դժուարութեանց, հալածանքի . . կոպտութեանց պիտի տոկամ, համբերեմ,—խորհում էր շարունակ,—մինչև որ օրս լրանայ, նը-պատակիս հասնեմ»։ Թէպէտ մեծ ցաւօք, մտատանջութեամբ նկատում էր աղա Կարապետովի վերաբերմունքի փոփոխութիւնը դէպի իրան, այն օրից, որ փող էր ուղած.... «Դժուար է, շատ դժուար, հլու, հաւատարիմ ծառայել և չ'գնահատուել..... Գոնէ խոժոռ նայուածքը, դէմքը ժպտար, բայց ինչ արած, պէտք է տոկալ-մի կերպ համբերել»։

Կարապետովը խակապէս անտանելի էր դարձել. ամեն մի քայլափոխում անիրաւացի հայհոյում էր, գործին չէր հաւանում։ «Հերիք չէ, որ Ձեզ գործի ենք առնում, աշխատել ենք սովորեցնում, դեռ եկ փող էլ վճարէ», մրթմրթում էր շարունակ քթին տակէն։ «Ձրիակերներ, ձեր երկիրը ի՞նչ ըրիք, որ հոս ի՞նչ ընէք», խօսքեր, որոնք քարի նման կնստէին արդէն յոգնած, վշտաբեկ Աշոտի սրտում։ Բայց քանի որ վճռած էր համբերել և տոկալ, լռում էր և սպասում։ Օր մը տխուր, մառատանջ, օր մը յոյսով, համրում էր օրերը կալանաւորի նման, անձնուիրաբար նուիրուած իր վսեմ նպատակին։ Նա մանաւանդ, երբ տեսնում էր նորեկ հայրենակիցների աւելի թշուառ վիճակը. անգործ, անմխիթար, շատերը շեղուած, անբարոյական կեանքի հոսանքին մատնուած.....ոմանց՝ վեներական հիւանդութեամբ վարակուիլը, միւսներու՝ օտարի փառքից տարուելը. շատերին՝ անվերադարձ կորուստը, եայլն։ Այս զեղխ և սխալ կեանքերի հեռանկարից սարսափած, աւելի ուժ, աւելի եռանդ էր ստանում, աւելի աշխուժով աշխատում։ Ընդհակառակն՝ Աշոտը, որքան աշխատում էր Կարապետովին սիրաշահել, գոհացնել, օգտակար դառնալ, կարծես, Կարապետովը ալ աւելի խոժոռում էր, ալ աւելի տակի վերաբերուում։ Ինչով բացատրել՝ չգիտէր։ «Եթէ իմ ներկայութիւնը այդքան անհաճոյ է,

ինչու համար ինձ պահում է, հաշիւս չէ տալիս։ Լէ գնա, կորիր, քո բնութիւնը ինձ դիւրեկան չէ, ինձ օգտակար չես կարող ըլլալ, ուրիշ տեղ բաղդդ որոնէ»—այս հարցերն էին, որ վերջերս մատածութեան առարկայ էին դարձել Աշոտին։ Պէտք է վերջապէս այս անորոշ դրութեան վերջ տալ. վճռում էր հասկանալ գաղտնիքը, բայց ինչպէս ընել, ինչպէս հասկանալ, իսկ ուղղակի իրան հարցնել, մեծ, շատ մեծ յանդուգն քայլ կըլլար. մինչև իսկ կարող էր, մի գուցէ, աշխատած տեղից զրկուիլ, հետևապէս և «նամակ գրելու իրաւունքից»։ Ծանօթ մը, սրտակից մը չունէր, որու միջոցաւ, գոնէ, կարող ըլլար իմանալ գաղտնիքը, կամ, աւելի ճիշդը, իրականութիւնը. ինչ ընել։

Այսպէս մտատանջ և տանջալից անցնում էին օրերը. ոչ մի ելք, ոչ մի միջոց գտած չէր գաղտնիքը իմանալու համար։

Մեծ զարմանքով նկատեց իր ծանօթ սրճարանատերի չյուճախելը, որուն միջոցաւ, գոնէ, կարող ըլլար մի բան իմանալ։ «Սև, անողոք բաղդը ամեն կերպ հալածում, հետապնդում է ինձ...։ Մինչ անբաղդ եմ ծնուած և անբաղդ եմ մեռնելու, ահ, Աստուած»։ Ուզում էր բղաւել, սակայն անյայտ, անբացատրելի վախ մը, գերեզմանային սոսկում մը զգաց . . . և յակամայից հայեացքը Կարապետովին ուղղեց, կարծելով, որ

Իրա հոգեկան վրդովմունքը... խռովքը զգալով, գոնէ մի մխիթարական խօսք կամ ժպիտ չէր-նայեր, դերի ընկած, թշուառ պանդուխտի մը մաշուող...տաջուած սրտիկը հովահարելու։ Իսկ Կարապետովի մռայլ դէմքի արտայայտութիւնը, ոչ թէ մխիթարական, սփոփիչ՝ այլ աւելի խիստ, աւելի բարկացոտ էր։ Նա, կարծես, ուզում էր ասել. «Թէ ես քո հոգեբանութիւնը շատոնց հասկացած եմ, ինչ ծաղիկ ըլլալդ՝ նոյնպէս, և քեզ պէս շատերից կշտացած»։ Այդ խոժոռ նայուածքէն սարսափահար՝ առջիը սկսաւ նայել, վախենալով, որ երկու հակա-հոգեբանութեամբ լեցուած հայեացքներից կարող էր մի ինչ որ վատ, անախորժ բան դուրս գալ։

Ալ չգիտեր, թէ ինչպէս երեկոյ եղաւ։ Գընում է տուն հանդչելու։ Հասաւ տուն։ Յոգնած մարմինը ձգեց երկաթեայ հին, ժանգոտ մահճակալի վրայ, բայց քունը չէր գալիս, աչքերը չէր գոցւում...մտածկոտ խորհում էր իր անբաղդ վիճակի վրայ։ Պատուհանից երևաց թագուհի լուսինը, սգաւոր կոյսի մը նման՝ կապոյտ կամարի վրայ...։ «Քո չքնաղ, նազելի նայուածքին դուրպան, նայէ, նայէ, բայց ինչու համար քո դէմքն էլ մռայլ է ու խաւար, ինչու համար քո փայլուն, համայիչ տեսք էլ կորուցեր է իր առջի սիրունութիւնը, գարդը։ Որու սուգն ես լալիս... մի՞թէ դու էլ ինձ նման սիրականի կարօտով ես

տանջում. մթթէ դու էլ ինձ նման հայրենիքից հեռու օտարներով, անծանոթներով ես շրջապատուած. . . . Դուն չես գիտեր, որ հեռաւոր երկրի պանդուխտներու հայրենի վերջին յիշատակն ես, զարթօնքը սրտին...ինչու համար մըռայլուած, վշտաբեկ ես նայում . . . ես չուզեմ քեզ այդպէս տեսնալ, ինձ ցոյց տուր քո հայրենի նագելի դէմքը, որու մէջ հեռաւոր պանդուխտը, գուցէ իր սիրականի ժպիտը, հայեացքը նշմարէ . . . դէհ փայլէ, փայլէ, յուսոյ վերջին նշոյլ.....»

Ո՛վ գիտէ դեռ որքան կզառանցէր մեր խեղճ Աշոտը, եթէ թուխպ, սև ամպ մը չգար, չծածկէր լուսնոյ գալկահար դէմքը... և երկար սպասող նինջը չգար հանգստացնելու նրա կէս քուն, կէս թմրած աչքերն ու ուղեղը։

Առաւօտ նա սովորականից ուշ վեր կացաւ։ Անմիջապէս, առանց նախաճաշելու վազեց, շտապեց գործին, որ տեղի չտայ Կարապետովի հայհոյանքներին։ Բայց և այնպէս գաղտնի զգացմունք մը գուշակել էր տալիս մի ինչ որ նոր կռուվ, նոր հարուած...։ «Էհ, Աստուած ողորմած է, ճակատագրնիս ինչ որ գրուած է, պիտի տեսանք» մտածելով, խրախուսելով իրեն, մտաւ խանութ։ Կարապետով դրամարկղի մօտ նստած, խոժոռ դէմքով, բիրտ բռնակալի զգիր հայեացքով, դիտում էր չորս կողմը։

Աշոտին սովորականից ուշ գալը Կարապետովի առանձին ուշադրութիւնն էր գրաւած. նայում էր նրան, ինչպէս մի ոճրագործի, որուն սպասում է անպայման պատիժ, զրկանք։

Սակայն Աշոտը առանց կարեւորութիւն տալու, սովորականի նման պատրաստ կայնած, սպասում էր հրամանի, գործելու, երբ Կարապետովը հրաւիրեց սենեակ, ուր մի քանի բուբլի ներկայացնելով՝ ասաւ.

—Ահա քեզ պատկանելիքը ստացիր և գիտցիր, որ սրճարանապետի ունեցած պարտքդ էլ վճարած եմ։

Աշոտը կաթուածահար եղածի նման ոչինչ չկարողացաւ պատասխանել, մի քանի րոպէ անշարժ կայնած, նայում էր, թէ տուած դրամին և թէ Կարապետովին, որուն դէմքը սովորականից քիչ մը մեղմ էր թւում, աւելի փաղաքշական...։ Մտածելով, որ յարմար րոպէն է. եթէ աղաչելու, պաղատելու, ներողութիւն խնդրելու մնէ, գուցէ ներէ, գութի դայ, վերաբերմունքը փոխէ, ուստի ասաւ.

—Աղա, ներողութիւն, քո հոգուն դուրպան, անգամ մըն ալ չեմ ուշանար.. քունս տարած էր, չկարողացայ արթննալ, հայրենիքում իմ յոյսով ապրողներու սիրոյն, կաղաչեմ, ներէ։

Կարապետովը մի քիչ մեղմ, փաղաքշական երևցած էր նրա համար, որ անգամ մը ծեծ-

ուած էր իրա ծառայից և վախենում էր, որ ևա-
նոյն դէպքը կրկնուի, իսկ երբ տեսաւ, որ դի-
մացինը աղիողորմ ձայնով աղերսում է, սիրտ ա-
ռած, քաջալերուած՝ պաղ, յանդիմանական ձայ-
նով ըսաւ.

— Երկար խօսելու պէտք չկայ... ահաւասիկ
քեզի պատկանածը, իմ տեղս ուրիշ ըլլար, ան-
էլ չէր տար, բայց ես չեմ կրնար, առ և ազատ
ես, ուր որ ուզես, կարող ես գնալ...

— Ախր ես այնպէս հաւատարիմ ծառայում
եմ, հլու, հնազանդ, ուր գնամ, որտեղ գնամ, ծա-
նօթ չունիմ, դարիպ եմ, օտար, և քիչ մնաց
որ արտասուէր։

— Ինչո՞ւ կան միթէ քեզ պէս, ամբողջ աշխար-
հը լեցուած է դարիպներով, ձեր դարդը ե՞ս պի-
տի հոգամ, գնա՛ ուր որ կուզես, ուրու որ կու-
զես, գնա՛, թափառէ, շարշարուէ, տանջուէ մի
քիչ, որ հասկանաս իմ արժէքը, այն ատեն այլ
բան է, կուգաս, կաշխատես, նորից բան մը
կընենք . . . ։

Աշոտը այդ խափուսիկ խօսքերից քիչ մը
յուսադրուած՝ առաւ իրան տրուած դրամը, հա-
մբեց, նայեց, կրկին համբեց։ «Միթէ ասիկա՞ է իմ
աշխատութեանս, մի քանի ամիսներու արեան
քրտինքի արդիւնքը. այսքան ա՜ժան, այսքան
քիչ»։ ուզեց բողոքել, որ այդ մի ամսուայ դին
է, ինքը այս քանի ամիս է աշխատում է, բայց

կարելի է սխալու�մարդը, լաւ է հարցնել։

—Աղա, տուած հաշիւը ճիշդ չէ. պակաս է, կարելի է սխալած էք, այ, նայէ։

—Է՛կուր ու սատկ անտառակներուն նորից գործի առ, ի՞նչ... քի՞չ է, ես այդչափ վաստակմ, իսկ ինչպես չե՞ս ուզեր ընկերանալ, կկարծես, թէ չեմ կրնար քեզանից ինչպես պահանջել... ահա՛, մի բուբլի ես, դէ՛, հայդէ՛, կորիր։

Աշոտը՝ մինչև իսկ չնկատեց մի բուբլիին տալը, դուրս փախաւ սարսափած. որովհետև իրանից կարող էր ինչպես էլ պահանջել . . . և ոմ պիտի չհաւատար։

Գլուխը կախ, ուժերը թուլցած, անիծելով իր սև անողոք ճակատագիրը, գնաց ուղղակի պանդուխտներու սրճարանը՝ իր նմաններուն տեսնելու, գուցէ, քիչ մը մխիթարուելու։

Հազիւ նստած էր, թաղուած խոր մտածումներու մէջ, երբ սրճարանատէրը օրեր առաջ ստացուած նամակ մը բերաւ յանձնեց։ Նամակը տնից էր, հայրենիքից։ Գրում էին. ղրկած ղրուսին ստանալը, անգամ մըն ալ տեսնելու կարօտը, իրա կարիքութեան գովեստը և ապագայ հարստանեաց արժանանալու օրհնանքով և «շատ դրամ ղրկէ»-ով վերջացնում էին։

Իրա դրութեան տխուր տպաւորութիւնը և նամակի խոր ազդեցութիւնը նրա անմխիթար սրտին փղձկել տուին և նրա թախծոտ աչքերում

երևացին արտասուքի կայլակները . . . Նա լալիս էր... լալիս... անտէր... անօգնական . . . »

ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Է

Ձմեռ էր, ցուրտ, հոգեմաշ ձմեռ։ Գիւղական կեանքը, աշնանային ժրաջան աշխատութիւններից յոգնած, ստացեր էր մի ախրատանջ, միապաղաղ կերպարանք։ Այլևս դաշտերի մէջ, հոսհոսն, քրտնաթոր աշխատողների խմբակները չէին երևում։ Չէր լսւում աշխատասէր մշակի ոգևորիչ ծիծաղը, աշխատանքի երգի ձայնը, չէր լսւում և երգող թռչուններու կենդանարար դայլայլը. ամեն ինչ ախուր էր, և այն ատելիճան վշտալի, որ բնութիւնը, կարծես, կենսատու գարնան հմայիչ գեղեցկութիւնից զրկուած՝ սգում էր, լալիս . . . »

Թ. գիւղի տեղացիք ալ մասամբ ցրտից պատսպարուելու և մասամբ մըն ալ մոռնալու սգալից բնութեան խորագդիչ տպաւորութիւնը, ներսերը քաշուած, մի կողմից՝ երիտասարդք վիճում էին պանդուխտներու կեանքից, առօրեայ հարցերից, միւս կողմիցն էլ ծերերը յուսադրւում

գարնան մօտալուտ գալստով։

Այդ օրերը մօտակայ հայ գիւղ մը քուրդ աւազակ աշիրէթներու խմբի մը կողմէ յարձակման էր ենթարկուած։ Անտէր, անպաշտպան գիւղը թալած կողոպտած, նրանք, մի քանի հայ գեղջկուհիներ առևանդած, հանդիսա սովորական խաղաղ սրտով, յաղթական «հուրրա»ներով մեկնած ժամանակներին, խումբ մը անծանօթ կտրիճներով պաշարուած էին գտած ինքզինքնին։ Ելք չկար։ Կամ զէնքի զօրութեամբ պէտք է ազատուէին և կամ անձնատուր ըլլային։ Լեռնցի քըրդի հպարտութիւնը չէր զիջած յանձնուելու և վճռուած էր կռուել։ Գիւղի ամեն անցքերը գոցուած, մի խումբ կտրիճներու պաշտպանութեան տակ էր։ Սկսուած էր երկու կողմէն կատաղի կռիւ մը։ Քուրդերը վիրաւոր առիւծներու նման գրոհ էին տուած գանազան կողմերը, բայց հանդիպած էին քարէ սեպ-ապառաժ դիրքերու, անխախտ կայնած վագրի նման քաջերու։ Երկաթը մեռաղին էր հանդիպած։ Մի քանի անգամ էլ քրդերը գրոհ էին տուած անվհատ, բայց ամեն անգամ էլ մեծ զոհերով նահանջած։

Տեսնելով, որ անխնայ կոտորուում են, փրկութիւն, ճար չկայ, որ իրանց ընկերներից շատերը կիսամեռ ընկան թշնամու մահաբեր փամփուշտից, և վիրաւորները պաղատում են անձնատուր ըլլալնին, զինաթափ եղան։ Անծա-

նօթ խմբին Պեռը կարիճ, երկայն հասակով, լայն թիկունքով և ջլապինդ բազուկներով առոյգ երիտասարդ մըն էր։ Նա հրամայած էր անմիջապէս վիրաւորներուն վէրքերը՝ իրանց մօտ գըտնուած՝ վիրաբուժական դեղերով կապել, իսկ 20 անձնատուր եղողներէն 4 հոգիի, լաւ մը դանակոծելէն վերջ, ըսած էր.

—Ձեր կեանքը ձեզ եմ խնայում, որ գնաք պատմէք ձերոնց՝ քաջերի վեհանձնութիւնը. ինչ կարժէ ինձ այժմ ձեզ սպաննել... մի քանի գընդակ, բայց չեմ սպաննում. որովհեան դուք ինձ յանձնուած էք, իմ խղճի պատասխանատուութեան տակ կգտնուիք։ Այդ խեղճ անդէն հայերը, որ կողոպտում, թալլում, ջարդում, առևանդում էք, ըսէք. ինչպէս, դո՞ն կմնայիք, եթէ որ ես ալ ձեզ հետ այժմ նոյնպէս վարուէի։ Եթէ արեան կարօտ էք, դիակի սիրահար, քաջերի դէմ կռուեցէք...։ Դուք կարծում էք, թէ ձեր ըրածը քաջութիւն է, հայրենասիրութիւն է, ո՛չ, դա գարշելի ստորնութիւն է, ցածր լրբութիւն է...։ Մինչև հիմա եթէ հայերը լուռ, ստորտունջ համբերած են, դուք կարծում էք, թէ վախից է և կամ չէին կրնար վրէժ լուծել, ո՛չ. սխալում էք...։ Նրանց ամենամեծ սխալը եղած է, աւա՜ղ, իրանց զոհերովը, տխմար լռութեամբը ձեզ խղճահարել, զգաստացնել, իսկ դուք երես առած, անառակ լակոտների պէս քանդում, ա-

ւերում, չարդում էք։ Ձեզ ապատ եմ թողնում, որ գնաք պատմէք ձերոնց, թէ մենք թե ու թիկունք պիտի ըլլանք այդ աշխատասէր, աշխարհաշէն ազգին, (Պեսը խօսում էր քրդական մի որոշ բարբառով) որ եթէ դուք մի գիւղ աւերէք, մենք 10-ը պիտի աւերենք, եթէ մէկը ըսպաննէք՝ մենք տասը պիտի սպաննենք. այլևս դանակը ոսկորին է հասած... ինչ որ ընէք, տասնապատիկը պիտի ստանաք... առատօրէն վաճառող մը լաւին, և ընդունակ կըլլայ առատօրէն հատուցանել գէշին»։

Այս դէպքը մի քանի օրեր առաջ էր պատահած։ Շրջակայ քուրդերու մէջ խլրտում մը, վայնասուն մը ընկած էր։ Թէ ուզում էին վրէժ լուծել և թէ սարսափում էին մէկին տասը վրայ տալէն....։

Այդ երեկոյ էր, որ գիւղի երիտասարդները, կողմնակի լուրեր հաւաքած՝ այդ անցքի մասին էին խօսում։ Հոդ էր և Անանիկը։ Տեղւոյն սովորութեան համեմատ դպրոցի սրահում էին ժողովուած, ինչպէս միշտական հաւաքւում էին գիւղի մտաւոր ուժերը՝ գաղափարի փոխանցումներ ունենալու համար։

Մկոն, որ լաւ տեղեկութիւններ ունէր հաւաքած, անհամբեր դարձաւ ներկաներուն և

—Տղերք, ըսաւ, այդ անծանօթ խումբը 15 ընկերներէ բաղկացած է, չնայելով, որ քրդե-

ըէն են խօսած, հայերը են եղեր, հայերը . . . Կովկասից եկած նոր ուժերը.....

—Այո, ես ալ այդպէս իմացայ, իրաւունք տուաւ Սերոբը, Կովկասից են եկած և նրանց մէջ է եղեր և մեր Խաչիկը, և մեր Թորոսը։ Ա-նոր համար վերջին գրած նամակին մէջ՝ զրում էր, թէ ինձանից շուտ նամակ մի սպասէք...։ Շատ հաւանական է, շարունակեց Մկոն, գնա-ցին և տեսան, որ գիտցածնուն, կարծածնուն չափ հեշտ չէ պանդխտութեան դաժան կեանքում տոկալը և եկան իրանց տունը քանդող դարա-ւոր ոսոխներից վրէժ լուծելու . . . ։

—Մկո, չկրցար իմանալ, թէ ո՞ր կողմը գնա-ցեր են և թէ ինչ է եղած նրանց բուն նպա-տակը, հարցուց Սեպուհն։

—Մկոն, խօ գիտէք, բանի մը որ գնայ, ա-մեն բան մանրամասն չիմացած՝ չգար, չհանգս-տանար։ Նրանք Կովկասի հայ . . . . . ական կոմիտէի շարքերում են գործում, և ոչ թէ ան-հատական մի խումբ է։ Եկած են, խօսքը մեր մէջ մնայ... ձայնը ցածացնելով ուզեց շարունա-կել, բայց յանկարծ բան մը զգալով, կանգ առաւ, և մօտենալով պատուհանին՝ դիտեց դուրս։ Դուրսը մութ, խաւար գիշեր էր։ Մի քանի քայլ հեռուն չէր կարելի ոչինչ նշմարել. ո՞վ պիտի յանդգնէր այդ տեսակ մութ գիշեր դուրս գալ, նա մանաւանդ, երբ ժամանակները արիւ-

նոտ էին ու անապահով։ Հորս կեղմը լաւ մը դիտելէ և համոզուելէ վերջ, որ մարդ չկայ, ընդհատած խօսքը աւելի ոգևորիչ և խրոխտ ձայնով մը շարունակեց.

—Նրանք, ինչպէս ասի, Կովկասի հայ կոմիտէի շարքերում են գործում, եկած են տեղւոյս ժողովուրդը կազմակերպել... զինել. որպէս զի նա ընդունակ ըլլայ իրա անմեղ արիւնը ծծող ազրուկներու դէմ գործել... ի հարկին և կռուել մինչև խակ։

—Նրանց Պեսը շատ գիւղեր քարոզեր է, թէ.— «Աշխարհ լեցուած է հայ զարիսներով, պանդուխտներով, հայրենիքը կեանքէ զուրկ՝ որբանում է... Գնացողներից շատ քչերը վերադարձան. օտարութիւնը մեր օճախն է քանդում, մեզ ոչնչացնում է։ Հազարաւոր գնացողներու հազարաւոր յոյսերն օգուտ մը տուաւ հայրենիքին։ Հաշուենք գնացողների անվերադարձ կորուստը... բայց կրցաւ ձեր վիճակը այնպէս մը բարելաւել, որ կարիքը չզգայինք այլևս օտարներու դրկում կեանք, հանգստութիւն որոնել, կրցաւ ձեր վաշխառուներու տոկոսին, կողոպուտին վերջ տալ, կրցաւ ձեր գեղեցիկները առեւանգող, վավաշոտ աւազակներուն սարսեցնել, կրցաւ ձեր պատիւը, ինչքը, կայքը յափշտակողներուն արժանի պատիժը տալ . . . կրցաւ ձեր սուրբ նուիրականութիւնները ոտնակոխ ընող

ամբոխին շղթայել, սանձարկել... կրցա՞ւ, վերջապէս, ձեզ համար ապահով, խաղաղ կեանք մը ստեղծել, որուն այնքան կկարօտիք՝ քանի դարերէ ի վեր... և ի՞նչպէս կրնային օգնել, երբ նրանցից բաղդաւորները, արդէն լքած, հոն հեռաւոր հորիզոններում օտարների շքեղ կեանքի հետ ընտելացած, մոռանում են, թէ՛ ազգ, թէ՛ տուն, թէ՛ հայրենիք։ Այն թշուառները՝ որոնց մէջ դուցէ որոշ չափով մեռած չէ հայրենիքի սէրը, կարօտը, երբ պանդխտութեան դաժան, մահաբեր տանջանքների դէմ մաքառելով, իրանց չարքաշ գոյութիւնը պահպանելու վրայ են ճգնում, մտածում, նրանք կրնա՞ն ուրեմն մեզ օգնել, կարեկցել։ Ո՛չ երբէք։

Սակայն հայրենիքի վերքը մահացու է. սիրտն է խոցուած, վիրաւոր... նրան պէտք է կատարեալ բուժում։ Մեզի՛, միմիայն մեզի՛, ժողովուրդի հիմնական ուժի ըմբոստացումով, ապստամբութիւնով է, որ կարելի պիտի ըլլայ այդ լպիրշ, տնարգ կարգերուն վերջ տալ... կարելի պիտի ըլլայ տանելի կեանք մը ստեղծել։ Հետևապէս, եթէ ուզում էք սիրականի, «ազիզ» զաւակի կարօտով չտանջուիլ, եթէ ուզում էք կանգուն պահել ձեր պապենական օճախը, եթէ ուզում էք ձեր ցեղի ազատութիւնը՝ զինուեցէք, զինուեցէք, զինուեցէ՛ք»։

Բոլոր ներկայ եղողները լարուած ուշադրու-

թեամբ մարիկ կընէին, խորհելով. արդեօք կրկին սպասել, թէ շարժուիլ, իսկ եթէ շարժուիլ, ինչ ճանապարհով գնալ . . ։

Ինչիկը, որ այս խօսակցութիւնների ժամանակ ներկայ էր, ուշի ուշով պանդուխտների դաժան կեանքը ըմբռնած, ընկած էր խոր մտատանջութեան մէջ։

Եւ այդ իսկ մտատանջ, յուզուած դրութեամբ վերադարձած էր տուն։ Դէմքը թախծալի, ինքը յուզուած, քաշուաւ իր առանձնութեան սենեակը և սկսաւ երևակայել Աշոտի տանջալից կեանքը։

«Ի՞նչ կընէ արդեօք, որո՞ւ լուծի տակ կտանջուի նա մենակ, անմխիթար։ Ինչո՞ւ այսչափ ժամանակ նամակ չէ գրում, ինչո՞ւ...։ Ա՜խ, եթէ կարողանայի թռչուն ըլլալ, այս րոպէիս կթռչէի, կգնայի միասին ապրել, միասին օտարի լուծի տակ հեծել։ Բայց արդեօք այն ժամանակ գոյութիւն կունենար մեզ համար վիշտ, տանջանք, թախիծ... ինձի թւում է, թէ երբէ՛ք, երբէ՛ք։ Մեր սիրոյ յաղթական ուժից պարտուած՝ կհաւասարէին սար, ձոր, լեռ, դաշտ...։ Յիշում է արդեօք, որ ես իրան ասի. «աւելի լաւ է դեռ նը պատոի, ինձ կուլ տայ, քան իմանամ, թէ դու ինձ մոռցեր ես։» արդեօք մոռցե՞ր է նա իսկապէ՞ս . . . ոչ, չէ, չէ, չհաւատամ, երբէ՛ք։ Գնա, կորիր, անհիմն կասկած, եթէ մինչև իսկ ինքը

ըսէ՝ չհաւատամ. ալ ուր մնաց քո խաբուսիկ յոյսեր... բայց մի՞թէ չգիտեր, որ սիրած սիրտ մը այսքան երկար բաժանումից կհալի, կմաշի, ինչ պիտի ընէ քո փողը, քո արիւնոտ ոսկին։ Արի, կեանքս, դու ինձ պէտք ես... քո կորիւնը, արեւափայլ դէմքին է կարօտ իմ մաշուած սրտիկը։ Պիտի գաս, չէ, պիտի գաս...»։

Այն ատենան յուզուած, երեւակայութեան մէջ էր, որ իսկի չէր նկատում մօրը ներկայութիւնը. անուրջներու աշխարհն էր թռած։ Մայրը, գանելով Աննիկին տեսակ մը մտազբաղ դրութեան մէջ, սպասում էր հետեւանքին։

—Ի՞նչ ունիս, աղջիկս, ո՞ր տեղդ կցաւի, որ զունատուած դողում ես, հարցուց վերջապէս։

Աննիկը չպատասխանեց։

—Քեզ հետ չե՞մ, ո՞ր տեղդ կցաւի, Աննիկ։

Աննիկը տեսնելով մօրը, կիսասթափուած.

—Մայրիկ, քիչ մը գլուխս ցաւում է, չգիտեմ ինչից, ասաւ.

—Ի հարկէ, եթէ այդքան մտածես, տանջուիս, գլուխդ չէ, բան մ՚ալ աւելի կցաւի։

—Ա՛ֆ, թողունք այդ, արդէն անանկ էլ գլուխս ցաւում է։

—Հա՛, Աննիկս . . . լաւ խորհէ ու պատասխանէ. քեզ մտածմունքէ, գլխացաւէ ազատելու համար, որոշեցինք.... ամուսնացնել Յարութիւն աղայի մանչուն՝ Պետրոսին հետ։ Լաւ աղայ է,

գրել և կարդալ ալ գիտէ։ Իսկ, ով գիտէ, քո փեսացուն. երբ կուգայ, գուցէ և չգայ . . ։

—Ի՞նչ... Աստուած իմ, անկարելի է, երբէ՛ք, երբէք։ Նա կուգայ, անպատճառ կուգայ, բողոքեց խեղճը վճռական ձայնով։

—Դու ինձ ականջ ըրէ, մաքէդ կանցնես, որ ես իմ զաւակին վատ կկամենամ—պաղօրէն շարունակեց մայրը։

—Մայրիկ, մայրիկ, աւելի գերադասելի է ինձ համար գերեզմանի խորքում ննջել... քան Պետրոսին հետ կենակցել ու լքել իմ փեսացուն . . ։

—Դու ջահիլ ես, խելքդ չկարիր, հնազանդէ ծնողացդ։ Ճիւան հասակ, առոյգ կազմուածք, հարստութիւն... ալ ինչ կուզես, խենթ։

Զուզեմ աշխարհի ոչ հարստութիւնը և ոչ գեղեցկութիւնը...։ Կամ իմ Աշոտը և կամ մահ։

Այն տեսակ վճռական ձայնով մը խօսեց՝ որմէ լաւում էր. թէ վիշտ, թէ անարգանք։ Մայրը լռեց։ Տիրեց բաւական ժամանակ լռութիւն։ Ոչ ոք չէր խօսում, ոչ ոք չէր ուզում այդ լռութիւնը խզել։ Սակայն մայրը այլ ևս չկրցաւ համբերել երկար, ընդհատելով լռութիւնը և հակադիր զգացումներու լարուածքը խանգարելով, ըսաւ.

—Սիրելիս, արդէն քո դիմադրութիւնը աւելորդ է, ինչու որ մենք խօսք տուինք և այլևս չենք կրնար մերժել...։

—Դուք չէք կընար։ Ինձ իրաւունք կուտաք մերժելու։

—Իմացողը ինչ կըսէ . . չպիտի ըսեն, թէ ինչ անպատիւ աղջիկ է, որ ծնողաց խօսքին չէ հնազանդում և սրա նման, ով գիտէ դեռ, ինչեր։

—Թող մարդիկ ինձ անպատիւ կոչեն, անհնազանդ անուանեն, այպանեն, ես չեմ հնազանդիր, չէ, քանի այս սիրտս քովս է և ընչելէ չեմ զրկուած . . . ։

Մայրը, տեսնելով աղջկայ անսպասելի դիմադրութիւնը, համարելով այդ ողայական տաքութիւն, որ շուտով կանցնի, կհամակերպի։ Արդէն վճռուած, վերջացած հարց մըն է, մըտածելով, դուրս կելլէ, կգնայ նրա հօր սենեակը ձեռք առնուելիք միջոցների մասին խորհրդակցելու։

Աննիկ, հոգեկան տանջանքի մէջ, վերջին աստիճանի յուզուած, խելագարի մը նման քըմծիծաղ մը նետեց սենեակի դռան, ուրկէ կմեկնէր մայրը՝ ու կայացուց իր այս վերջին որոշումն ու վճիռը, թէ. «Աւելի լաւ է զերեզմանում հանդչել, քան չսիրածի հետ ապրել»։

ԹԱՓԱՌԱԿԱՆԸ

Ը

Կար մօտաւորապէս երեք ամիս, որ Աշոտը անգործ, անմխիթար թափառում էր քաղաքէ քաղաք՝ գործ և աշխատութիւն գտնելու յուսով։ Ամեն օր նոր յոյսերով, նոր յոյզերով մաքառում էր անողոք ճակատագրի դէմ՝ ապագայ երազած կեանքի երջանկութենէն արբշիռ, բայց կարծես, ուր որ պիտի գնար, ուր որ պիտի դիմէր՝ իրան հետապնդող նոյն բաղդը գացած էր արդէն. հետևապէս ամեն ջանք, ճիք ի զուր էին և մնում էր միշտ անգործ, միշտ անօգնական։

Այդ հալածեալի թշուառ դրութեան մէջ, եթէ ունէր մխիթարութիւն մը, դա իրա նման պանդուխտներու չարքաշ կեանքն էր։ «Մենակ ես չեմ, ինձ նմաններ շատ կան» խորհելով, մխիթարւում էր։ Իսկապէս իրան նման թշուառներ թէպետև շատ կային, որոնք ամենը առանձին՝ մէկը միւսին յոյսոյ յենարաններ էին, բայց իրականութեան մէջ բոլորն էլ թշուառ, բոլորն էլ օգնութեան կարօտ էին։

Եթէ իր նմանները ունէին առաւելութիւն մը, համարեա, մեծամասնութեամբ իրանց կեանքը զեղխութեան և անբարոյականութեան մատ-

նուելն էր, որ բառի լայն իմաստով, Բաքոսի և աֆոնեան գիշերների երկրպագուներն էին դարձած իսկական։ Լքած էին ամեն բան. օր մը կուշտ, օր մը անօթի, քարշ էին տալիս իրանց ցաւալի գոյութիւնը, առանց գիտնալու, թէ ինչու կապրին, ի՞նչ է կեանքը և ո՞վքեր են իրանք։ Մոռցեր էին ամեն սրբութիւն, պատիւ։ Եթէ պէտք ըլլար դժոխքում փայտի տեղ մարդ վառել, կարելի է, թէ օգտակարութիւն կրնային ունենալ։ Այս էր շատ պանդուխտների անմխիթար, ցաւալի պատկերը, տխուր իրականութիւնը։

Ինչպէս փճացածներու բնատուր է, առ հասարակ, մարդ որսալ իրանց շրջանը լայնացնելու, որպէս զի իրանց պակասները էնքան նկատելի չըլլայ, հէնց այդ բաքուային մթնոլորտի ինքնատուր ընդունակութեամբ, այս քանի անգամ է, համոզում էին Աշոտին, որ իրանց օրինակին հետևի, առարկելով, թէ. «Միևնոյն է արդէն, բաղդը չէ՛ ժպտում, բայց այսպէս գոնէ մոռացութեան ենք տալիս մեր ամբաղդ կացութիւնը, ձգէ թէ վայրկեաններ, բայց զգում ենք երջանիկ», բայց միշտ էլ չէին կրցած համոզել. որովհետև նա հայրենիքում «սէր» ունէր, որուն շուտ տիրապետելու համար ուզում էր, գործ, ջանք, աշխատանք, որպէս զի կարող ըլլար ժամանակին մեկնել հայրենիք՝ խոստմնագանց չըլլալու համար։

Եւ սակայն անողոք բաղդը այն աստիճանի հետապնդում էր, որ նա երբեմն ուզում էր, իր լաւագոյն հայրենակիցներու օրինակին հետեւի, գոնէ պահ մը ներկան մոռացութեան տալու համար, բայց... հինաւուրց կաղնիի հսկայ նայուածքը և Աննիկի պատասանքը՝ կասեցնում էին ու ջնջում այդ յանցաւոր ցանկութիւնը։

Վաղը կիրակի էր։ Աշոտը միտքը դրաւ առաւօտ, կանուխ արշալոյին եկեղեցի գնալ, աղօթել Մարիամ Աստուածածնի պատկերի առջև, գուցէ գթութեան մայրը գար օգնութեան պանդխտին՝ հալ ու մաշ սիրահարին։ Չէ՞ որ գթութեան մայրը գերագոյն բարեաց զգացումներու ամբողջութիւնն է։

Եւ դա հէք Աշոտի վերջի միակ յոյսն էր և ապաստանը։ «Բոլոր անուանի բարերարներուն դիմեցի ինձ գործ մը գտնալու համար, բոլոր բարեկամներու խորհուրդներուն հետեւեցի, բոլոր անծանօթներուն առաջարկեցի իմ ծառայութիւնը, ամեն տեղ անօգուտ, ամեն տեղ անգութ... ի՞նչ ընեմ այլեւս, որո՞ւ դիմեմ։ Յուսալով, յուսալով նամակս ալ ուշացուցի։ Գրէի, գոնէ անից, հայրենիքից մի մխիթարական խօսք կլսէի, հիմա ալ ի՞նչպէս գրեմ, ի՞նչ գրեմ։ Եթէ մի քանի կոպէկ ըլլար, արդարանալով, ինչ գրութեան մէջ գտնուիլս կնկարագրէի, իսկ հիմա ի՞նչպէս ընեմ, որո՞ւ օգնութեան դիմեմ...։ Միթէ շատերի նման

գեղխութեան մասնեմ ես ինձ, մոռնամ հայրենիք, տուն, ծնողք, սիրական...։ Բայց ինչպէս կարելի է, քանի այս սիրտը հետս է, իմ կրծքի տակ... և կամ սիրտս հանեմ ,նետեմ, փշրեմ։ Ով Աստուած, Դու եկուր ինձ մխիթարել, օգնել, եթէ ոչ այս կեանքը անտանելի է, դժուար։ Քո ամենատես աչքի առջև անմեղ սրտումս սէրը ըսկսաւ գոյութիւն առնել, հիմա էլ Քու գիտութեամբն է, որ տանջում ես, չարչրկում, ինչու, չէս գիտեր, որ մարդիկ անզօր են դիմանալու Քո ստեղծած տանջանքներին, չէս գիտեր, որ Յովբ երանելիների դարը անցեր է և մարդիկ այժմ աւելի մեղմացած, նրբացած աղերսում են Քեզանից աւելի խնամք, գութ, սէր»։ Այսպէս բողոքելով շարունակ Աստուծոյ և նախախնամութեան դէմ, այս ծանր մտատանջ յուզմունքների բեռան տակ ընկճուած և յոգնած, Աշոտի քունը տարաւ։

Դուրսը սառնամանիք էր։ Քամին փչում, ոռնում էր։ Նա ևս, կարծես, մարդկանց անարդարութեան դէմ բողոքելով՝ ոռնալով փախչում էր հեռու, մարդկանցից հեռու... դէպի լեռ, ազատ դաշտ։

Առաւօտը շատ վաղ վեր կացաւ, շտապեց եկեղեցի։ Վերջի սև կապէկով գնեց մոմ մը, վառեց գթութեան մօր առջև և ծնկաչոք սկսաւ աղօթել. «Ով դու բարեկոյս սրբուհի, մայ-

բական բարեխնամ զգացումներով լի քո Աստուածապատուութեան եմ դիմում, գթա, արի օգնութեան թշուառ հալածեալիս, փրկէ նրան կարիքի մահակուռ ճիրաններից, Դու օգնող կարօտեալների, մայր որբերի, յոյս տառապեալների.. գերազոյն բարիքների։ Դու տեսնում ես, թէ որ աստիճան հալածուած եմ, թշուառ, անմխիթար։ Հաւատա, Մայր Կոյս, իմ խնդրարկու ձայնով չէի երբէք քեզ ձանձրոյթ պատճառի, գիտեմ, շատեր կան ինձ պէս քեզանից օգնութիւն հայցող, գիտեմ, բայց ինչ արած, ուրիշ յոյս ապաստան չունիմ, բացի քու գթահայց բարեխօսութենէն, գթա, ողորմէ։ Վերջի միակ սև դրամովս, գիտես, որ մում մը գնեցի և վառում եմ քո պատկերի առջև և նրա բոցերի մէջն մի ճարճատիւնը, վերջացնում է իմ յուսոյ կանթեղը. ներշնչելով նոր հաւատք, նոր յոյս, թէ Աստուածորդուդ առջև լսելի պիտի ըլլայ իմ աղօթքը»։

Այսպէս երկար՝ ծնկաչոք աղօթում էր Աշոտը։ Ոչ ոք նկատի չէր առած զարիպին։ Քրիստոնեայ հոծ ամբոխին մէջ նա որբ էր, բոլորին անծանօթ։

Ծովու մահագուշակ ալիքներու դէմ յորձանք տալով, մարտնչող զինուորի մը յուսադրութեամբ, որ հեռաւոր անյայտութիւնից ըսպասում է իր փրկութիւն—ազատումը, նա յուսադրուած, դուրս եկաւ եկեղեցուց ու գնաց։ Գը-

նում էր, ինքն էլ չգիտէր ուր էր գնում և ինչու։

Հիմա կէս մը յուսադրուած, այլևս գործի մասին չէր մտածում, կասկածում էր, որ մի գուցէ ժամանակին չվերադառնայ հայրենիք, խոստմնազանց ըլլայ, որու հետևանքը, իրաւ, աւելի ծանր, աւելի ամօթալի էր թւում։ «Բայց ինչ ալ որ ըլլայ, անպատճառ կգնամ» մտածում էր, «խոստմնազանց չեմ գանուիր սիրուհուս հանդէպ։ Անօթի անվաստակ, բայց վերջապէս կգնամ. թող մարդիկ ինձ այպանեն, թող մարդիկ իմ վրայ ծիծաղին, թող ինձ անընդունակ, ագէտ մէկը անուանեն, ես կգնամ, ես կգնամ և կըսեմ. ես եկայ, տեսնում ես, Աննիկ, հին, մաշուած, զգեստներով, այրուած, տանջուած դէմքով, բայց միևնոյն անմեղ երիտասարդական վառ սիրով։ Ամեն տանջանքների, հալածանքների տակից, դիմացայ, ով գիտէ, եթէ քիչ մըն ալ մնայի, գուցէ բաղդը ժպտար և ես աւելի յաղթապանծ վերադառնայի, բայց որովհետև քեզ սիրում եմ և որպէսզի խոստմնազանց չըլլայի քո առջև, յանձն առի իմ անձնասիրութեան վիրաւորանքները, և ամեն բան մէկդի դրած, եկայ քեզ փնտռելու և գտայ։ Ներէ, ներէ ինձ, եթէ իմ յոյսերը չկարողացայ իրագործել։ Ես յանցանք չունեմ, անիծուի սև բաղդը, որ այդքան անողոքաբար հետապնդում էր ինձ։ Այլևս դու,

միակ դու ես իմ մխիթարութեան հրեշտակը, միակ դու կարող ես ինձ երջանկացնել, իմ կըրած, քաշած տանջանքներս թեթևացնել»։

«Քիչ ալ նշանակեալ օրուայ լրանալուն կըսպասեմ» միշտ խորհում էր, «հաւատով լի կկըռուիմ իմ ուժիցս բարձր ճակատագրի դէմ, եթէ ժպտայ երանի ինձ, իսկ եթէ ոչ, ես կգնամ, թող նա իմ սէրը մերժէ, իսկ ես չեմ կարող։ Բնա՛ւ, երբէք»։

Այսպէս վճռում էր շարունակ, բաւական ժամանակ ես տոկալ մաքառելի, բայց ինչ ալ ըլլար, գնա՛լ, գնա՛լ, գնալ։

Քամին դադրած էր, օդը խաղաղ՝ և Աշոտը այդ մտածումներով գնում էր, ինքն ալ չգիտէր ո՞ւր։

ՀԱՐՍԱՆԻՔԸ

Թ

Ծնողների յամառ կամքը յաղթած էր։ Հարսանիքի պատրաստութիւն էին տեսնում։ Ո՛չ Անիկի աղիողորմ արտասուքները, ո՛չ բողոքները, ո՛չ յուսահատ սպառնալիքները և ո՛չ շատերի մտերմական խորհուրդները չէին կարողացել

խղճահարել տղէտ, յամառ ծնողաց քարասիրտ անդթութիւնը։ Որոշած, էին, հետևապէս, պէտք էր իրագործել, ինչ գնով էլ ըլլար, քանիի ալ նստէր։

Սակայն չնայելով, որ ծնողքը առանց իր աղաչանքներուն, արտասուքներուն ուշադրութիւն դարձնելու, հարսանեաց պատրաստութիւն էին տեսնում, ինքը՝ Աննիկը, վճռում էր կրցածին չափ դիմադրել, կրցածին չափ կռուիլ։ Նա դեռ յոյսով էր, որ Աշոտը անպատճառ կուգայ։ Օրը լրանում է, ահ, ինչպէս կարելի է սիրել անկեղծ, մաքուր սիրով, երկար սպասել սիրոյ գալստեան, և վերջը լքել, ուրիշի յանձնուիլ։ Բնաւ, երբէք։ Մեր հայ ցեղի առհմային ազնուութեան մէջ գրուած բան մը չէ սա։ Ես աւելի շուտ կհաշտուիմ ոչնչանալու, մեռնելու, քան լքելու իմ սէրը։ Գոնէ կիմանան մարդիկ, թէ ինչպէս հայ գեղջկուհին էլ կարող է իր սիրոյն զոհուել, մեռնել։ Եւ այն ժամանակ իմ Աշոտը չինայէր սև հողակոյտս սիրել, ուխտի գալ, համբուրել անվերջ, յաւիտեան և ես գէթ երջանիկ, կըլլամ յաւիտենականութեան գրկում։

Այդ կիրակի հարսանիքը պիտի կատարուէր, որովհետև ծնողքը ամեն պատրաստութիւն տեսած էին, ուստի վճռում էր մինչև կիրակի ըսպասել, գուցէ գայ, իսկ եթէ չգայ, կամ փախ-

չիլ, հեռանալ հայրենի տնից և կամ ցուրտ դի-
ակը յանձնել անդութ ծնողաց։

Իրենց դիւղի դեղատան ծառայողներու մի-
ջոցաւ շատ դժուարութեամբ կրցաւ թոյն ձեռք
բերել։ Այլևս անձնասպանութեան, թունաւոր-
ման մտքի հետ հաշտուած էր։ Քանի անգամ
ուզում էր խմել, գնում էր Աշոտենց, վերջին
հրաժեշտը տալու, համբուրելու հինաւուրց կապ-
նին և հոն իսկ խմելու, բայց մի անյայտ ոյժ,
չգիտէր ուրկից, բռնում էր ձեռքը, չէր կարո-
ղանում։ Քանի անգամ մահը մօտից ճանաչեց՝
բայց չէր յանդգնում։ Քան տարուայ գարուն
հասակի մէջ կեանքը դեռ անոյշ էր, հրապուրիչ։
«Ա՜խ, եթէ անգամ մըն էլ տեսնայի Աշոտիս,
այն ժամանակ հեշտ էր», խրախուսուելով միշտ
յեսաձգում էր։ Սակայն առաջի անգամուայ նը-
ման սոսկալի չէր թուում այժմս և եթէ հիմա
իսկ չէր իրագործում, վախը կեանքից զրկուիլը
չէր, հապա անգամ մըն էլ Աշոտին տեսնելու
փափագը, սրտի պահանջը։

«Ահա, ուր որ է կուգայ», գաղտնի ձայն
մը ասում էր ներսէն, «սակայն ուր է, ինչու
չի գալիս անգութը»։

Վերջին անգամ ըլլալով, գաղտնի գնաց Ա-
շոտենց. որովհետև ծնողքը արգելած էին այլևս
յաճախել նրանց, գնաց վերջին մնաք բարեաւը
ասելու և իմանալու, նամակ կամ մի որ և իցէ

սեղեկութիւն չկայ։

Սովորականի նման մտածկոտ, տխուր դբրութեան մէջ գտաւ Աշոտի ծնողաց, որք տանջալից հարցերու ճնշման տակ ընկճուած, մտախոհ դիտում էին հեռաւոր անյայտութիւնը, ուր մեկնած էր որդին և ուրկէ պիտի վերադառնար։

Աննիկի անսպասելի գալը աննկարագրելի ուրախութիւն պատճառեց թշուառ ծնողաց։ Պահ մը իրանց հարազատին տեսածին նման հրճուած, դիտում էին, զի շատոնց տեսած չէին ապագայ հարսնացուին, որդւոյ սիրականին, որ խլում ,յափշտակում էին իրանցից։

—Որդեակ, ի՞նչ պատասխան պիտի տամ դաւկիս, եթէ չկարողացայ քո սէրը վառ պահել, քեզ յափշտակողներու, խլողներու ձեռքէն փրկել, ազատել, Աննիկի այտերը շոյելով, մելամաղձ ձայնով մը հարցուց Խաթունը։

—Արդէն պատասխանը ես ինքս պիտի տամ, դու անհոգ կաց, մայրիկ, շուտափոյթ պատասխանեց Աննիկը։

—Նամակա՞ւ։

—Ո՛չ, փաստացի հաստատելով, որ սիրում էի անկեղծ, մաքուր սիրով . . . ։

—Ի՞նչպէս։

—Կ'իմանաք, հիմա վաղ է ըսել . . . ։

—Բայց չէ՞ որ այս կիրակի հարսանեաց պը-

սակաղրութիւնը պիտի կատարուի... անկէ վերջ այլեւս ինչով կարող ես հաստատել, որ սիրում էիր իմ զաւկին։

—Բաւ է, մայրիկ, անանկ ալ վիրաւոր սիրաս մի խռովեր, ըսի և կկատարեմ. այն ժամանակ կհասկանաք հայ գեղջկուհու սիրու զօրութիւնը, զգացմունքի ոյժը . . . ։

Խեղճ կինը ոչինչ չէր հասկանում տեղի ունեցած խօսակցութիւնից, ուստի աւելի պարզ և որոշ հասկանալու համար հարցուց.

—Ի՞նչ պատասխան պիտի տամ զաւկիս, որդեակ, երբ վերադառնայ քեզ գտնելու յոյսով։

—Կըսես կսիրէր և պիտի սիրէ յաւիտեան...։

—Խօսքով . . . ։

—Ո՛չ, զգացմունքով. ես այժմ եկայ վերջին հրաժեշտ տալու և խնդրուելու քեզանից, որ երբ գայ, ըսես՝ թէ հանդիստ խղճով նրա սիրոյն զոհ եղայ . . . ։

—Ի՞նչպէս, ինչ ըսել կուզես, լաւ բացատրէ, որ հասկնամ։

Այսչափն էլ բաւական է, վերջը կիմանաս, միայն աղաչում, պաղատում եմ, երբ գայ, ըսել, որ սիրոյ զոհ եմ... սրտիս ողջակէզ...։

Տիրեց խոր, գերեզմանային լռութիւն. երկուսն էլ լռած էին, Իսկ ծերուկը դիտում էր դեռ հեռաւոր հորիզոնները։

Երկինքը թուխպ, թանձր ամպերով ծածկը-

ուած էր. երկի, կրկին պատրաստուում էր լալու։ Ոչ ոք չէր խօսում, ոչ ոք չէր ուզում խորհրդաւոր լռութեան թախծալարար ազդեցութիւնը խռովելու։

Արտասուքը աչերին, որդւոյ կարօտի փոխան, համբոյր մը դրոշմելով Աննիկի ճակատին, Խաթունը ընկճուած, պաղատագին ձայնով ըսաւ.

—Եթէ իմ զաւակս է, եթէ իմ կաթով սնած, մեծցուցած դառնուկն է՝ նա կուգայ, վաղ թէ ուշ նա կուգայ։ Նրա սրտում անկարելի է, որ մարին, մոռացուին անկեղծ սիրոյ բոցերը։ Երբ նա գայ, ի՞նչ պիտի ընէմ . . . ի՞նչ պիտի ըսեմ . . . Տէ՛ր Աստուած։

—Պատասխանը ես կուտամ, ըսելով, Աննիկը համբուրեց դողդոջ ձեռքը մայրիկին և դնաց առանց յետին նայելու, առանց ուշադրութիւն դարձնելու մօր աղաչանաց, որ կանչում էր. «Նա կուգա՛յ, սպասէ, անպատճառ նա կուգայ, կուգա՛յ։

Ահա՛, տես, տես խաթուն, մեր ցաւերի, վշտերի ծանրութիւնից յոգնած երկինքը, նորից լալիս է, կիսաձայն նկատեց ծերուկը։

Տեղատարափ անձև էր գալիս։

ՎԵՐԱԴԱՐՁԸ

Ծ

Անցեր էին ամիսներ նոր յոյսերով, նոր յոյզերով, իսկ անողոք բաղդը դեռ չէր ժպտում մեր Աշոտին։

Դժուար էր, շատ դժուար այժմ։ Պարտուած, յուսախաբ վերադառնալ հայրենի տուն, երբէք այդ մտքի հետ հաշտուել չէր կարողանում, աւելի դերադասում էր պանդխտութեան դաժան կեանքում տանջուիլ, քան էդպէս յուսախաբ, դլխիկոր վերադառնալ հայրենիք. բայց այնտեղ «Նա» կար, առանց որու ապրելը անկարելի էր։ «Եթէ տոկում եմ, խորհում էր, այս դառնակսկիծ կեանքին, լոկ իմ նուիրուած նպատակս իրագործելու, նրան գտնելու համար է, իսկ եթէ պիտի զրկուիմ նրանից և կամ մոռացուիմ, աւելի լաւ չէ՞ որ ամենից մարդկանց ծաղր ըլլամ, հեգնանքի առարկայ»։

«Այո, այս պէտք է, անհրաժեշտ է պարտուած, յաղթուած դրութեամբ իսկ վերադառնալ հայրենիք, գտնել նրան, եթէ փնտռում սիրում էի»։

Այսպէս բաւական ժամանակ ինքն իր մէջ

կառնելուց վերջ՝ վերադառնալու մտքի հետ հաշտու

Եւ որովհետև վճռած էր վաղն իսկ մեկնիլ՝ այդ երեկոյ հրաւիրեց պանդուխտ հայրենակիցներին, խապրիկներ հաւաքելու, տանելու իր հետ հայրենիք. կարծես, ինքը տեսակ մը ոյժ առած, ուզում էր իր համագիւղացիներին իրանց ունեցած սխալները, զգացած մեղսանքը յայտնել։

Երեկոյեան իրա համագիւղացիներ, համարեա, բոլորն էլ եկած էին իրանց կեանքից տեղեկութիւններ, նամակներ, բարևներ զրկելու իրանց էութեան մաս կազմող՝ տնեցոց, ծնողաց։

Աշոտը, տեսակ մը արհամարհանքով լսում էր. թէ ինչպէս ամենն էլ սուում են իրանց կեանքը, կենցաղը՝ իսկական դրախտային նկարագրելով։ Մտիկ էր տալիս պժգանքով թէ ինչպէս դրախտային էին նկարագրում իրանց դժոխային աշխատանքը. չէ՞ որ ինքը շատ լաւ գիտէր, շատ մօտիկից ծանօթ էր նրանց կեանքին։ Ուզում էր նրանց դէմքին իսկ պոռալ. թէ դուք սուում էք, խաբում էք, անիրաւներ, դուք իսկական անբաղդ թշուառներ էք և սակայն ուզում էք, որ ես ձերոնց ձեր կենցաղը նկարագրեմ դրախտային, արքայական, չէ՞. ատիկա ես չեմ կարող, ես չեմ կարող երբէք ստել իրականութիւնը.. բայց զսպում էր ինքն իրան, և լռում էր, մտածելով, որ արդէն անանկ էլ նրանց ծաղրի առարկան է, հիմա բոլորովին խայտառակ կըլլայ։ Ո՛ր ճշմարտախօսը իր արդար պատիժը

կրած չէ, կամ արհամարհանքի և կամ մութ բանդի խորքերում։

Լռած մարիկ ըրաւ յակամայից երկար։ Այդ բոպէին դրանց բոլորին առաւ էր, արհամարհում էր, որ լոկ եսասիրութեան մը համար կեղծում էին, աղաւաղում անմեղութիւնը։ Եւ ինքնին սոսկալով մտածեց. եթէ սրանք աւելի բարձր դիրքի տէր ըլլային, ով գիտէ ինչեր չէին ըներ փառքի համար։

Համագիւղացիները գնացին։ Ինքը մնաց մենակ իր մտածումներու և սրտի դալկութեան հետ։ «Արդեօք սրանց նմաններու բռնած սխալ, անարգող ընթացքի հետևանքը չէ, որ ես և, ով գիտէ, դեռ ինձ նման քանիներ դիմած են դարիպութեան։

Ի՞նչու համար իրականութիւնը ուրանալ, ճշմարիտը կեղծել, չէ՞ որ դուք տանջւում էք, չարչարւում չորքոտանի կենդանիներից տատապատիկ աւելի սոսկալի . . . . Դուք բարոյապէս փչանում, կորչում էք բոլորովին, ինչու համար ձեր անարատութեամբ պատճառ էք դառնում, որ ուրիշներն էլ փչանան, կորչեն. ի՞նչ արժէ ձեզ ճշմարտութիւնը չպարզել . . . ։

Սակայն պիտի հաւատան արդեօք, եթէ ես դնամ և իրականութիւնը պատմեմ. թէ օտարութիւնը դաժան է, կարծանարար է, հալածանք է, կեցէք տեղերնիդ և հայրենիքը հիմքից բարենո-

բոգելու աշխատեցէք։

Զպիտի հաւատան — վշտաբեկ մարդից անցուց-որովհետև, ով որ գալիս է, այլևս իր Ես-ին խաբուսիկ պատուոյն համար, ստիպուած է լինում վարակուած մթնոլորտի ազդեցութեան տակ գործել։ Այլևս ոչ կհաւատայ մէկ անվաստակ, անընդունակ, ոգէս վերադարձողին, երբ անդին, ահագին վոհմակ մը ուրիշ տեսակ է պատմում։ Ըսենք, որ արար աշխարհի կեանքումն էլ ճշմարտութիւնը յաղթած է սակն։ Ո՛չ, ո՛չ, ո՛չ։» Եւ նա այսպիսի անվերջանալի մտածումներու ազդեցութիւնից յոգնած՝ քնացաւ։

Գիշերը պարզ էր։ Ջինջ, կապոյտ երկնակամարի վրայ թագուհի լուսինը՝ իր նազելի նայուածքը աշխարհին դարձուցած, հազար նազանքով պատում էր. և նրա արծաթ ցոլքերում գիշերային կենդանութեան հիւլէն էր պսպղում։

Աշոտի երկու ընկերները, որոնք անկեղծ յարգում էին նրան, առաւօտ կանուխ եկած էին ճանապարհ դնելու, իսկ միւսները — եթէ կարելի է նրանց էլ ընկեր անուանել — չէին եկած, ժամանակ չունենալնին առարկելով, որովհետև հայրենիք, դէպի գիւղ վերադարձողը աղքատ էր և դուցէ շատերին ծաղրալի։

Շտապով հասան կայարան։ Քանի մը վայրկեանից շոգեկառքը պիտի մեկնէր։

Երբ շոգեկառքի զանգակի երկրորդ ձայնը

հնչեց, բաժանման բոպէին լռող ընկերները յուզուած լալագին ըսին. «Երթաս բարեաւ, ընկեր, գնա, անվտանգ հասիր հայրենիք և պատմէ մեր դառն կեանքի խկութիւնը։ Հոն, զուլումի երկրում, չըլլայ թէ հրապուրուին շատերի անհիմն պատմածքներից..Երթաս բարեաւ...»։ Շոգեկառքը շարժուեց։

Անշարժ կայնած երկու յուզուած սրտեր, արտասուաթոր աչերօք, դիտում էին կայարանից գնացքը շոգեկառքի. որ տանում էր երջանիկ թէ անբաղդ վերադարձող մը դէպ հայրենիք։

Երկու օր վերջը Աշոտը անցնում էր սահմանը. զգալով անհուն ուրախութիւն և չհաւատալով, որ մօտ օրից պիտի տեսնայ իր սրտի տիրոջին —Աննիկին։

Ո՜հ, որքան երջանիկ էր այժմ Աշոտը. նա մինչև իսկ մոռցեր էր, որ պարտուած է վերադառնում։ Այժմս լոկ հանդիպման բոպէն էր երևակայում, թէ ի՞նչպէս ծնողքները պիտի ուրախանան, թէ ինչպէս Աննիկը պիտի հրճուի... պիտի ժպտայ . . . ու բնաւ իսկ չէր մտածում, որ գընում է յոգնած, մաշուած, յուսախաբ....։

Արդէն բաւական անցած էր սահմանը, երբ սկսաւ նկատել իր մեկնած ժամանակուայ շէն, ծաղկեալ գիւղերու աւերակ, փլատակ ամայութիւնը . . . Ինչո՞վ բացատրել..։ Սրանք հայու

գիւղեր էին, այո՛, ինքը շատ լաւ յիշում է . . . Զարմանալի թէ յանկարծ այս գիւղերու բնակիչներն ալ մեզ նման վաշխառուների, բռնակալների զուլումէն ծծուած, քամուած օտարութեան դիմելու հիւանդութիւնից վարակուած ըլլան և ինքնին յիշեց Խաչիկի խօսքերը, որ մեկնած ժամանակնին պնդում էր թէ .«Մենք պարտուած խոյս ենք տալիս, փախչում, ասպարէզը թողնելով մեր թշնամեաց, իրանց կամքի համաձայն ապատ գործելու, անվախ իշխելու»։ Որքան իրաւունք ունէր... և իսկապէս, սա չէ՞ մեթէ կենդանի ապացոյցը մեր անվերջ սխալներուն...։ «Աւաղ, որքան ահռելի կորուստ է տուեր մեր հայրենիքն, մեր երկիրը՝ մեր իսկ ձեռքով, մեր իսկ գործքով աւերուելով։ Գնում ենք, հեռանում, փոխանակ մեր պապենական օճախը վառ պահելու, երբ նա առանց մեզ մարում է, փչանում, ոչնչանում...։ Հոս արիւն, արցունք, զուլ�...։ Հոն, հալածանք, վիշտ, տանջանք»։ Եւ այսպէս, Աշոտը ինքն իրա զգացումներու հետ խօսելով, գնում էր. և այսպէս, ամեն մի փլատակ շէնքի աւերակ, մոխրակոյտի տեսքը զարթեցնում էր նրա սրտում և՛ թախիծ և՛ վիշտ, և՛ վրէժ, և՛ բողոք...։

Աւերակների մոխրակոյտների միջից անցնելով, մտնում էր հայրենի տան...։ Ահա, արդէն երևում են հայրենի լեռները, կատարը, կամարը։ «Ինչու՞ սիրտս բաբախում է, դողում . . .

Ալիացիը, այժ ան, Աշոտ, գիմացիը այս հոգեանչ բոպէին ալ, որ իրաւունք ունենան վշտաբեկ ազգի մը կարիճ գաւակը կոչուելու.. առաջին անգամ մըն է տեսնում ես այս վիթխարի լեռները, հսկայ քարերը, ու դող ես ելնում. սիրաս, սրանք քեզ հարազատ են, քու սեփականը».—խրախուսում էր ինքն իրան։

Հեռուում, իրանց գիւղի կողմը, նկատեց որ երկինքը շատ ամպած է։ Ահա, մշուշի միջից նըկատեց և կայծ մը՝ տեղատարափ անձրևի հետ։ «Երկինքը շանթ ու կրակ է արձակում մեր գիւղի գլխին...։ Ահա, կրկին ամպը գոռաց և կրկին լուսաւոր կայծ մը։ Կերևի երկինքն էլ է բարկացած մարդկանց անիրաւութիւնների վրայ, որ սարսեցնելու, պատժելու համար այդքան սոսկալի շանթ ու կրակ, կայծ ու մրրիկ է թափում»։

Այդ բոլորը շատ գէշ ազդեցին Աշոտին վրայ։ Դրա մէջ նա գուշակում էր մի ինչ որ սատանայական խաղ, չարագոյն խորհուրդ։ Առաջ, որ մինակ սիրտն էր դողում, հիմա սկսաւ ամբողջ մարմնով դողալ, սարսուռ զգալ։ Արագացուց քայլուածքը՝ դուրսը չգիշերելու համար. որովհետև արևը արդէն պահուած էր հսկայ լեռների քամակում։

Արդէն իրանց գիւղումն էր։ Փիչ վերջը և նկատեց իրանց տունը։ Գիւղի ներսերից լսում էր, տավուլ-զուռնայի մը ձայն, և ուր որ է հար-

սանիք կայ, մտածելով, աւելի արագացուց դնացքը։

Մի միայն վշտատանջ արևելցուն ինքնատուր է դուլումի մէջ պարել... երգել... և հրճուանքի ժամանակ՝ լալ...։

Աշոտը մի ինչ որ անբացատրելի վախ, սոսկում զգաց։ Ամպը այլևս չէր գոռում։ Բնութիւնը իր բարկութեան մաղձը թափելէն վերջ՝ խաղաղած էր։ Երկնքում նշմարւում էին կապոյտ կէտեր, գծեր։

Հասաւ տուն, բայց չէր յանդգնում ներս մտնել։ Ուզում էր, որ առաջ իրան տեսնային։ Երկու վայրկեան սպասելէ վերջ՝ վճռեց մտնալ։ Կամաց մը յանցաւորի նման ներս մտաւ։ Տավուլ-զուռնայի ձայնը աւելի ուժգին լսւում էր։ Հազիւ սենեակի դռան մօտեցած էր, խաթունը նկատեց։

—Ո՜հ, Աշոտս եկա՞ւ . . . եկա՞ւ . . . ասելն և դեռ վզին չփաթթուած՝ իյնալը մէկ եղաւ։

—Մայրիկ, վեր կաց, ես Աշոտն եմ, եկայ.... եկայ ասելով, ուզեց բարձրացնել, երբ մայրը

—Անենիկը... հարսանիք . . . խլեցին, ասելով, դեռ խօսքը չաւարտած՝ դարձեալ ընկաւ։

—Ի՞նչ, մթթէ այդ հարսանիքը իմ Անենիկի հարսանիքն է, իմ կեանքի.... իմ հոգո՞ւ . . . . Ո՜հ, դա անկարելի բան է . . . դա ընդունուած բան մը չէ. դա անգթութիւն է, դա անգթութիւն

է...։ Դուրս վազեց։ Մի քանի բոպէ ինչ ընելը չգիտնալով, խելագարի նման նայում էր ու մրմնջում։

«Ես կգնամ... հիմա, այս բոպէիս, ես կվազեմ, կգնամ, կըսեմ սա իմս է, իսկ ես նրանն եմ։ Ի՞նչ էք անում.. ինչո՞ւ խլլում, յափշտակում էք։ Հարցուցի՞ք իրան, կամքը տո՞ւք։ Ո՞վ իրաւունք ունի մեզ բաժնել..... Գացած էի, տեսնո՞ւմ էք. եկայ»։ Առանց երկար մտածելու, գլխաբաց վազեց՝ թողնելով ուշաթափուած մօրը և հև ի հև եկեղեցիէն ներս մտաւ։

Չնայելով, որ սկսուած էր պսակադրութեան արարողութիւնը, Աշոտի երևնալն բոլորի ուշադրութիւնը գրաւեց։ Ո՞վ էր, չէին ճանաչում։ Նայեց՝ և Անանիկը։ Նրան կարծես սպասում էր։ «Ո՛հ, նա է, Աշոտս, եկա՜ւ . . . եկա՜ւ... փա-փագն տուի, անգամ մըն ալ տեսայ արևափայլ դէմքը... հիմա հանգիստ և գոհ սրտով կմեռնիմ»։ Հազիւ նկատելի այլոց, մի ինչ որ խմեց՝ երկու կաթոտատենչ հայեացքների ելեքտրական ուժից ազդուած։ Դա նկատեց Աշոտը, բայց ուշ էր։ Փոքր իրարանցումէ վերջ՝ Տէր-հայրը դեռ չաւարտած. «Պէս, պէս փորձութիւններ, տանջանքներ,» խօսքերը... ընկաւ Անանիկը, «Աշոտս» կանչելով։

Օգնութիւնը անօգուտ էր։

Անանիկը, գոհունակութեան ծիծաղ մը դէմ-

քին, պաղ աչերը յառած, դիտում էր Աշոտին, որը, դեռ տաք դիակի առաջ ծունկ չոքած, լաւիս, յուսահատ ազերսում, աշխատում էր ուշքի բերել . . . . .

Բայց Անանիկը մեռած էր։

[3n.]

II
A 2808

Սկզ
օրիՀամ

ԳԻՆՆ Է 30 Կ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220028086

A II
28036